

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

«ՊԱՏՈՒԾ ԹՈՒՂԹԻ ՄԸ ՎՐԱՅ ԳՐՈՒԱԾ ՈՐՈՇՈՒՄ»Ի ՄԸ ՄԱՍԻՆ

ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Աֆղանիստանի եւ Իրաքի վրայ կատարուած օդային ու ցամաքային արշաւանքներէն ետք, ԱՄՆ-ի հակա-ահաբեկչական պայքարի ընդհանրացուցած յօգուցի տակ, Մահմուտ Ա. հմատի նկատի Պարսկաստանը քիբախ հանդիսացաւ ծանրակշիռ ամբաստանութիւններու: Որպէս թէ՛ Պարսկաստան կը բաջոյնքէ ահաբեկչութիւնը, կը ֆինանսաւորէ եւ օքեւան կը դառնայ անոր: Նաեւ՝ ԱՄՆ կը վկայէ թէ Թեհրանի իշխանութիւնը լծուած է իր ուրոյն կորիզային ռուսթր պատրաստելու լուրջ աշխատանքի:

ԱՄՆ՝ Հիւսիսային Քորիայէն ետք կը ծրագրէր բանալ չորրորդ նակատ մը: Ծրագիր՝ որ շուտով կը կանխուի շնորհիւ իրեն դաշնակից երկիրներու եւ ՄԱԿ-ի ազդու միջամտութեամբ: Ծրագիր՝ որ մոխիրի տակ պահուեցաւ որպէս միտան կրակ, յարմար առիթին բռնկեցնելու համար: Այդ առիթը ստեղծուեցաւ շուտով, Ծարաթ 23 Դեկտ. 2006-ին, ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդի՝ Պարսկաստանի դէմ միաձայնութեամբ առած որոշումով:

ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդը աւելի քան չորս ամիսներ քննարկելէ ետք Պարսկաստանի պարագան՝ միաձայնութեամբ բուլետարկեց թիւ 1737 որոշումը, որ գալիք 60 օրերու միջոցին պարտադրաբար պէտք է գործադրուի խնդրոյ առարկայ կողմի միջոցաւ: Հակառակ պարագային, ՄԱԿ-ը կրնայ դիմել այլ բնոյթի միջոցառումներու: ՄԱԿ-ի առած այս որոշումը՝ Պարսկաստանի Դեսպան ժակատ Զարիֆի դառն գնահատութեամբ, կու գար պատժելու «Ազգ մը (խօսքը կը վերաբերի իր երկրին, Տ.Ա.Գ.) անբռնաբարելի իրաւունքներուն տէր կանգնելուն համար»: Մինչ, համանուն երկրի նախագահ Մահմուտ Ա. հմատի նկատ, Ապահովութեան Խորհուրդի որոշումը այդ որոշումը նմանցուց «պատուած թուղթի վրայ գրուած արձանագրութեան»:

Թիւ 1737 որոշումը կը պարտաւորեցնէ Թեհրանը միանգամ ընդ միշտ դադրեցնել ուրանիումի հիւլէական ռուսթի արտադրութեան մէջ գործածուող ծանր շոգարակ մետաղ մը-հարստացումը, որ, վերջին հաշուով պիտի ծառայէր կորիզային ռուսթերու պատրաստութեան, ինչ որ պիտի վտանգէր Միջին Արեւելի երկիրներու ապահովութիւնը: Ան նաեւ կը պարտաւորեցնէր անգամ երկիր-

Շարք էջ 17

ՆԻՔՈԼԱՍ ՊԸՐՆՁ. «ՊՈՒՇԻ ՎԱՐՉԱԿԱԶՄԸ ԵՐԲԵՔ ԶԷ ՅԵՐՔԱԾ 1,5 ՄԻԼԻՈՆ ՅԱՅԵՐՈՒ ԲՆԱԶՆՁՈՒՄԸ»

Ամերիկայի պետական քարտուղարի փոխանորդ Նիքոլաս Պըրնզ յայտարարած է, որ ԱՄՆ-ի վարչակազմը երբեք չէ հերքած 1,5 միլիոն հայերու բնաջնջումը: «Հակառակ որոշ պնդումներու՝ ոչ դեսպանի պաշտօնին առաջադրուած Հոգլանտը, ոչ ալ վարչակազմը երբեք չեն նսեմացուցած կամ հերքած այն փաստը, որ Օսմանեան կայսրութեան վերջին տարիներուն 1,5 միլիոն հայ բնաջնջուած է եւ բռնի տեղահանուած», - գրած է Պըրնզ նամակի մը մէջ, որմէ Դեկտեմբեր 26-ին մէջբերուած կատարած է «Ատտիէյթըտ Փրես» մամուլը գործակալութիւնը:

Սոյն նամակը ուղղուած է Նիւ ձըրզի նահանգէն ծերակուտական Ռոբերդ Մենենտէյին, որ կասեցուցած էր Հայաստանի մօտ Ամերիկայի դեսպանի պաշտօնին համար ներկայացուած Հոգլանտի թեկնածութիւնը:

Մենենտէյ եւ Ծերակուտի դեմոկրատներու առաջնորդ Հէրի Ռիտ վերջերս դիմած էին պետական քարտուղար Քոնալիդա Ռայսին՝ խնդրելով Հոգլանտի թեկնածու-

թիւնը ետ կանչուի: «Ամբողջ դիւանագիտական ծառայութեան համար ամօթ կը դառնայ, եթէ դեսպանի պաշտօնին առաջադրուած Հոգլանտ, որ փորձառու դիւանագէտի հիմնալի կենսագրութիւն ունի, չհաստատուի՝ դեսպան էվընզի հետ կապուած տարածաշրջանային պատճառով»- ըսուած է Պըրնզի նամակին մէջ:

Հայաստանի մօտ ԱՄՆ-ի դեսպանի պաշտօնին առաջադրուած Ռիչըրտ Հոգլանտ Ծերակուտի կողմէ չէր հաստատուած, երբ ամերիկահայ կազմակերպութիւններ եւ որոշ ծերակուտականներ հարց բարձրացուցին, թէ ինչո՞ւ է ժամկէտէն շուտ երեւանէն ետ կանչուած էր դեսպան ձոն էվընզ, որ հրապարակաւ ճանաչած էր Հայոց ցեղասպանութիւնը:

«Ատտիէյթըտ փրես» նաեւ մէջբերում կատարած է դեմոկրատ գոնկրէսական Ատամ Շիֆէն, որ ըսած է. - «Կը կարծեմ որ, վերջին տասնամեակին մենք ամենալաւ առիթը ունինք Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ բանաձեւը ընդունելու համար»:

ԺԱԿ ՇԻՐԱԿԻ ԵՒ ԱԶՆԱԴՈՒՐԻ ԱՅՑԸ՝ ՅԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐՈՒ ՅԱՄԱՐ ՏԱՐՈՒԱՅ ԳԼԽԱԴՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ

2007-ի սեմին Vox Populi հասարակական կարծիքի ուսումնասիրման կեդրոնը հետազոտութիւն կատարած է Երեւանի բնակիչներու մօտ: Առաջարկուած է նշել Հայաստանի համար անցնող տարուայ Ամենակարեւոր իրադարձութիւնները Հայաստանի եւ Աշխարհի համար: Կեդրոնը նման հարցախոյզ կը կատարէ աւանդաբար՝ ամէն տար: Տարուայ իրադարձութիւնը նկատուած է Ֆրանսայի նախագահ Ժակ Շիրակի այցը Հայաստան եւ Շարլ Ազնաւուրի համերգը այս առթիւ: Իսկ աշխարհի համար տարուայ իրադարձութիւնը նկատուած է Ֆրանսայի Խորհրդարանին կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչում: Հարցախոյզին, որ կատարուած է Դեկտեմբերի 17-էն 22-ը, մասնակցած են 593 Երեւանցիներ:

ՃՈՐՃ ՊՈՒՇԸ ՍՏՈՐԱԳՐԱԾ Է ՅԱՅԱՍՏԱՆԸ ՇՐՁԱՆՑՈՂ ԵՐԿԱԹՈՒՂԻԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՖԻՆԱՆՍԱԴՈՐՈՒՄԸ ԱՐԳԻԼՈՂ ՕՐԵՆՔԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»:
ԱՄՆ-ի նախագահ ձորձ Պուշը անցնող շաբաթավերջին ստորագրած է օրէնքը, ուր ընդգրկուած է Հայաստանը շրջանցող երկաթուղիի շինարարութեան ամերիկեան պետական ֆինանսաւորումը արգիլող դրոյթ:

Դեկտեմբերի սկզբին նախ Ներկայացուցիչներու պալատը, ապա Սենատը միաձայն հաւանութիւն տուած էին «ԱՄՆ-ի Ներմուծման եւ արտահանման պանքի վերալիցազօրման մասին» օրինագծին, ուր ներառուած է դրոյթ Հայաստանի շրջանցմամբ Թուրքիան, Ատրպէյջանը եւ Վրաստանը կապող երկաթուղիի շինարարութեան՝ յիշեալ պանքի կողմէ ֆինանսաւորումը

արգելելու մասին: Արտահանման եւ ներմուծման պանքը ամերիկեան դաշնային կառավարական գործակալութիւն է, որ ֆինանսապէս օժանդակած է, մասնաւորապէս, Պաքու-Թիֆլիսի-ձէյհան նաւթամուղի շինարարութեան:

Ամերիկայի հայկական համագումարին հասցեագրուած յայտարարութեան մէջ ԱՄՆ-ու Գոնկրէսի հայկական հարցերով յանձնախմբի համանախագահներ Ֆրէնք Փալոնը եւ ձօ Նոլենբերկը ողջունած են օրէնքի ուժի մէջ մտնելը: «Հարաւային Կովկասի Միացեալ Նահանգներու քաղաքականութիւնը միտուած է տարածաշրջանային համագործակցութեան

«2007Թ-ԻՆ ՅԱՅԱՍՏԱՆ ԿԱՐՈՂ Է ՑՈՅՑ ՏԱԼ ԻՐ ՅԱՒԱՏԱՐՍՈՒԹԻՒՆԸ՝ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ»

Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանատան գործերու ժամանակաւոր հաւատարմատար էնթոնի Գոտֆրիի ամանորեայ ուղերձ մը յղած է Հայ ժողովուրդին:

Իր խօսքին մէջ ան շնորհակալութիւն յայտնած է երկու երկիրներու միջեւ գոյութիւն ունեցող ամուր բարեկամութեան ու սերտ համագործակցութեան: «Միացեալ Նահանգներն իր աջակցութեան ծրագրերի միջոցով, որոնց շրջանակում 1992թ. ի վեր Հայաստանին յատկացուել է շուրջ 1.6 միլիարդ ԱՄՆ տոլարի օժանդակութիւն, աշխատում է ամրապնդել ժողովրդավարական հաստատութիւնները, նպաստել Հարաւային Կովկասի կայունութեանն ու անվտանգութեանը եւ զարգացնել տարածաշրջանի բոլոր երեք երկրների տնտեսութիւնը»- ըսած է ամերիկացի դիւանագէտը:

«Ես յուսով եմ, որ 2007թ. ընթացքում Հայաստանն ու Միացեալ Նահանգները կ'աշխատեն միասին՝ կերտելու Հայաստանի ժողովրդի պայծառ ապագան: 2007թ. մասնաւորապէս նշանակալի կը լինի, քանզի իմ երկրի կառավարութիւնը հաստատակամ է աջակցել Հայաստանին կայանալու որպէս ծաղկուն ժողովրդավարական մի երկիր, որտեղ տնտեսական աճի բերած օգուտները վայելում են բոլորը: Այս տարին յատկապէս կարեւոր ու հետաքրքրական կը լինի, քանզի Հայաստանը հնարաւորութիւն ունի ի ցոյց դնել ժողովրդավարութեան մասով ստանձնած յանձնառութիւններին իր հաւատարմութիւնը՝ անցկացնելով ազատ ու արդար խորհրդարանական ընտրութիւններ»- շեշտած է էնթոնի Գոտֆրի իր ամանորեայ խօսքին մէջ:

Խթանման եւ յարաբերութիւններու բնականոնացմանը, այլ ոչ թէ մեկուսացմանը», - շեշտած են համանախագահներն իրենց յայտարարութեան մէջ: - «Մենք կ'օգնենք Թուրքիային վերանայել Հայաստանի օտարման քաղաքականութիւնը, վերջ դնել 13 տարուայ շրջափակմանը եւ քայլեր ձեռնարկել հարեւաններու հետ համագործակցութեան ուղղութեամբ»:

Ամերիկայի հայկական համագումարի գործադիր տնօրէն Պրայն Արտունին, իր հերթին, բարձր գնահատել է Ներկայացուցիչներու պալատի եւ Սենատի անդամներու դերը «այդ կարեւոր նախաձեռնութեան իրականացման գործին մէջ» եւ երախտագիտութիւն յայտնել է այն կազմակերպութիւններուն եւ անհատներուն, որոնք միացած են ամերիկահայ համայնքի ջանքերուն:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՏԱՏՈՒՄ-ՔՈՒՌՅԻ ՇՐՔԸ

Շատերն են թերեւս իրենք իրենց հարց տալիս, թէ ինչի համար էր Ռոբերտ Գոչարեանին անհրաժեշտ ստեղծել Բարգաւաճ Հայաստան կուսակցութիւնը, եթէ այն որեւէ կերպ չէր հակադրուելու Հանրապետականին: Բարգաւաճի ստեղծումն ինքնին արդէն հակադրութիւն էր իշխող մեծամասնութեանը, բայց որքան մօտենում է ընտրութիւնը, այնքան հակադրութիւնը խորանալու փոխարէն, ինչը առնուազն պէտք է դրսևերուէր երկրի զարգացման վերաբերեալ ծրագրային մօտեցումների տարբերութեամբ, խորանում է հարցերի կլանային ընկալումը: Գազաթնակէտը թերեւս կարելի է համարել Ռոբերտ Գոչարեանի վերջին հեռուստատեսութիւնը, ուր նախագահը փաստօրէն անուղղակի առաջ քաշեց Լեոպոլդ կատուի կարգախօսը՝

համար: Այդ առումով բաւական զգալի ռեսուրս ունի Բարգաւաճ Հայաստանը: Թէ ինչ ապաքարաքական միջոցներով է այդ կուսակցութիւնը հասարակական հեղինակութիւն ձեռք բերում՝ այլ խօսակցութեան թեմա է: Բայց փաստ է, որ ձեռք է բերում հեղինակութիւն, ինչը հնարաւորութիւն կը տայ իշխանութիւնը պահել առանց մեծ լցոնումների: Իսկ ընտրութեան «ազատութիւնն ու արդարութիւնը» հիմնականում պայմանաւորում է բուն քուէարկութեան օրով: Բարգաւաճն ահա այդ քուէարկութեան օրուայ համար է: Բայց այդ դէպքում ինդիք է առաջանում ՀՀԿ հետ: Հանրապետական խմբաւորումը, բնական է, չի կարող որեւէ կերպ հանդուրժել խորհրդարանում մեծամասնութիւնը կորցնելու հեռանկարը: Դրա համար էլ Ռոբերտ

Իրավիճակը պատկերացնելու համար բաւական է յիշել 1998 թուականը, երբ Կարեն Դեմիրճեանը եկաւ քաղաքական դաշտ, իրականում յաղթեց նախագահի ընտրութեանը եւ կայունութեան նոյն կոչով հանրութեանը հետ պահեց Ռոբերտ Գոչարեանի օգտին արուած կեղծիքներին համարժէք արձագանքելու քայլից, նպաստելով Գոչարեանի սահուն նախագահութեանը:

«Երեխաների համերաշխ սպրեւույթն» (ականջի կանչի, Չատուրի), նաեւ ակնարկելով ջունգլիների օրէնքը՝ «մենք քեզ հետ նոյն արիւնն ունենք, ես եւ դու»: Այդպիսով, յամենայն դէպս այս փուլում պարզ դարձաւ, որ Բարգաւաճ-ՀՀԿ մրցակցութեան սցենարը փոխարինւում է փոխլրացումով: Գուցէ դա Ռոբերտ Գոչարեանի համար ներիշխանական բախումներից խուսափելու, ստատուս-քվոն պահպանելու եւ ժամանակ շահելու միակ միջոցն էր, որովհետեւ մինչ Գազիկ Ծառուկեանը «ժողովրդի մասին կը մտածի», գուցէ Սերժ Սարգսեանը Հանրապետականների հետ կը լուծէր իշխանութեան հարցը:

Գոչարեանը յայտարարում է, որ երկրի ղեկը պէտք է մնայ փորձառու ուժի ձեռքին: Դա նշանակում է, որ Բարգաւաճը ներկայում չի սպառնում Հանրապետական մեծամասնութեանը: Այսինքն, Գազիկ Ծառուկեանը պարտուում է անլցոն ընտրութիւն, յետոյ ձայները հաշուում են ու մեծամասնութիւնը նորից վերագրում, ասենք, Հանրապետականին: Ով պէտք է բողոքի, որ գողացել են Բարգաւաճի ձայնը: Տրամաբանութիւնը չուշում է, որ պէտք է բողոքի Գազիկ Ծառուկեանը, ում ժողովուրդը հաւատացել է: Բայց իրավիճակը պատկերացնելու համար բաւական է յիշել 1998 թուականը, երբ Կարեն Դեմիրճեանը եկաւ քաղաքական դաշտ, իրականում յաղթեց նախագահի ընտրութեանը եւ կայունութեան նոյն կոչով հանրութեանը հետ պահեց Ռոբերտ Գոչարեանի օգտին արուած կեղծիքներին համարժէք արձագանքելու քայլից, նպաստելով Գոչարեանի սահուն նախագահութեանը: Յետոյ, այս դէպքում ի՞նչ տարբերութիւն, թէ նոր մեծամասնութեան մէջ ով ինչքան ձայն է հաւաքել:

Այդ պարագայում հարց է առաջանում, թէ ինչու Սերժ Սարգսեանն անդամակցեց Հանրապետականին, եթէ նրան նախագահ է դարձնելու Բարգաւաճ Հայաստան անունով «պրոյեկտը»: Բանն այն է, որ ՀՀԿ-ն ամենեւին միատարր կառույց չէ եւ այն կարող է լինել բաւական անկանխատեսելի: Սերժ Սարգսեանի ինդիքն է կուսակցութիւնը բերեղացնելը: Պատահական չէ, որ Ռոբերտ Գոչարեանն իր վերջին հեռուստահարցազրույցում խօսում էր ՀՀԿ կուսակցական կազմակերպութեան թուլութեան մասին: Պաշտպանութեան նախարարի վրայ դրուած է այդ բացը լրացնելու ֆունկցիան՝ Հանրապետականը դարձնել կանխատեսելի, այսինքն վերահսկելի: Իսկ դա բաւական կարեւոր ու էական ինդիք է՝ կուսակցական բոլոր օղակներով վերից

ԿՐԿՆԱԿԻ ԲԼԵՖԻ ՄԵԹՈԴ

Խօսելով Արմաւիրի մարզի Նալբանդեան գիւղի գիւղապետ Ռոբերտ Մկրտչեանի սպանութեան եւ գուգահեռուող մի շարք դէպքերի մասին՝ հանրապետականները փորձում են ապացուցել, որ դրանք իրականացնում է մի երրորդ ուժ՝ ՀՀԿ-ին վարկաբեկելու համար: Նրանք ուզում են ասել՝ մի՞թէ ակնյայտ չէ, որ բոլոր այն դէպքերում, երբ կասկածները ուղիղ եւ միանգամից հանրապետականի վրայ են ընկնում, ՀՀԿ-ն այդ դէպքերի հետ կապ ունենալ չի կարող, որովհետեւ եթէ մէկը մի բան անում է նախապէս իմանալով, որ առաջինն իրեն են կասկածելու, չի անի նման բան: Ի հարկէ, այս ամէնի մէջ տրամաբանութիւն կայ, բայց կայ նաեւ հակառակ տրամաբանութիւնը: Եթէ որեւէ մէկը գիտի, որ առաջինը իրեն են կասկածելու, կարող է վերը նշուած տրամաբանութեամբ պաշտպանուել եւ իրեն կասկածողներին ասել. «Մի՞թէ ես կը գնայի նման ակնյայտ եւ բացայայտ քայլի՝ իմանալով, որ բոլորը իմանալու են, որ դա ես եմ արել»: Սա կարելի է կոչել կրկնակի բլեֆի մեթոդ: Այսինքն, ակնյայտութիւնը ամենեւին էլ ՀՀԿ-ի օգտին չի խօսում, այլ գուցէ թէ հակառակը: Իսկ ընդհանրապէս, յանցագործները զգուշանում են այն դէպքերում, երբ առաջնորդում են այն կանամտածումով, թէ իրենց կարող են պատժել: Իսկ Հայաստանում հիմա այնպիսի մթնոլորտ է, որ յանցագործները գործում են իշխանութեան դաբրոյով՝ նախապէս երաշխիք ունենալով, որ անպատիժ են մնալու (սրա վկայութիւնն է նաեւ այն, որ մարդ են խփում՝ զնում յանձնում. այսինքն՝ զնում են սեփական հովանաւորի՝ իշխանութեան մօտ պաշտպանութիւն ստանալու եւ նրան էլ պաշտպանուելու հնարաւորութիւն տալու համար): Իսկ նման դաբրօ երկրում կարող է տալ միայն մէկ հոգի՝ Ռոբերտ Գոչարեանը: Եւս երկու հոգի՝ Սերժ Սարգսեանն ու Գազիկ Ծառուկեանը, կարող են գործել մի փոքր պակաս լրագորութիւններով: Այնպէս որ, որեւէ արտառոց դէպքի մասին մտածելիս հեռու զնալ պէտք չէ, եւ ամէն ինչ պէտք է փնտուել հենց այս շրջանակներում: Եւ ծիծաղելի կը լինի կարծել, որ Գալուստ Սահակեանի նման անմեղատենակին որեւէ մէկը պիտի տեղեակ պահի, որ հետա մարդ ենք սպաննելու: Դրան մի քանի տաքսու գիծ են տուել, ասել են՝ եղազնա, իսկ երբ հարկաւոր կը լինի երգել, կ'երգեն: Ու հիմա նա երգում է: Նոյնը կարելի է ասել միւս հանրապետական եւ ոչ հանրապետական երգիչների մասին: Ինչ վերաբերում է երրորդ ուժի

վարկածին, գուտ տեխնիկական առումով նման վարկածը չի բացառում: Բայց եթէ պարզուի, որ ինչ-որ բան մի երրորդ ուժ է արել, ուրեմն արել է իշխանութեան հրահանգով եւ նրա հետ համաձայնեցումով: Կամ էլ իշխանութիւնը այդ երրորդ ուժում գործել է իր գործակալների միջոցով: Սա է իրականութիւնը, եւ թող ֆուֆլօ բազարներ իզուր չբացեն: Ինչ վերաբերում է աղմկոտ գործերը չբացա-

Հայաստանում հիմա այնպիսի մթնոլորտ է, որ յանցագործները գործում են իշխանութեան դաբրոյով՝ նախապէս երաշխիք ունենալով, որ անպատիժ են մնալու

յայտելուն. եթէ մի որեւէ նորմալ երկրի իրաւապահ համակարգ չի կարողանում գործ բացայայտել, դա կարող է նորմալ դիտուել: Բայց էս տոտալիտար իշխանութիւնը, որ ժուլոկ ունի թէկուզ մտքում ընդդիմադիր (էլ չենք խօսում իշխանամէտների մասին) տրամադրուած ցանկացած մարդու ստուսիկի մէջ, յանցագործութիւն բացայայտելու դժուարութիւնների մասին չպիտի խօսի: Եթէ չի բացայայտում, ուրեմն ինքն էլ արել է, եւ այստեղ ուրիշ տեղ չպէտք է ընկնենք: Եւ այս պայմաններում իշխանութիւնը եւ իշխանութեան յայտնի անձինք յստակ գիտեն, թէ ով ում երբ որտեղ է ուղղում ծեծել, վախեցնել, սպաննել: Եթէ չեն կանխում, ուրեմն իրենք են կազմակերպել: Ուրիշ տրամաբանութիւն չկայ:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ՊԵՏՏՕՆԱԹԵՐԹ՝ ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁՍԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Արեւմտեան Ամերիկայի Ծրջանի խՍԲԱԳԻՐ՝ ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ՂԱԶԱՆՃԵԱՆ ԽՍԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ ՍԱՂԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ ԿԱԶՂԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹՃԵԱՆ 362. (626) 797-7680 363. (626) 797-6863 E-Mail: massis2@earthlink.net http://www.massisweekly.com MASSIS Weekly Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104 Phone: (626) 797-7680 Fax: (626) 797-6863 (USPS 667-310) (ISSN 0744-334X) Published Weekly Except Two Weeks in August ANNUAL SUBSCRIPTION RATES: USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail) Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail). All payments must be made in US funds & Drawn on US banks. Periodicals Postage Paid at Pasadena CA. Please Send Address Change To MASSIS WEEKLY 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104

ԼՈՒՐԵՐ

ԵՐԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ՊԱՐԱՆՁԵՑԻՆ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵԼ ՍԵՖԻԼԵԱՆԻՆ ՈՒ ՄԱԼԽԱՍԵԱՆԻՆ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Արցախեան ազատամարտի մասնակիցներ՝ «Ազատագրուած տարածքների պաշտպանութիւն» նախաձեռնութեան համակարգող, սփիւռքահայ ժիւրայր Սեֆիլեանին եւ «Հայրենիք ու պատիւ» կուսակցութեան անդամ Վարդան Մալխասեանին ազատարձակելու պահանջով ուրբաթ օրը Երեւանում անցկացուած երթին մասնակցեց շուրջ 200 մարդ:



Ժիւրայր Սեֆիլեանի եւ Վարդան Մալխասեանի ազատարձակելու պահանջով երթ՝ Երեւանի մէջ

Երթի մասնակիցները Մերգեղեան պուրակից ուղեւորուեցին դէպի Ազգային Անվտանգութեան ծառայութեան շէնքը, այնտեղից՝ Հանրապետութեան հրապարակ: «Ազատագրուած տարածքների պաշտպանութիւն» նախաձեռնութեան քարտուղար Արմէն Աղայեանը «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց, որ Սեֆիլեանին ու Մալխասեանին կայանքի տակ են պահում «ոչ թէ քննութեան շահերից ելնելով, այլ կազմակերպութեան անդամներին վախեցնելու նպատակով»:

Եւ, ի վերջոյ, այս ամէն ինչը [իշխանութիւնները] հաշուի են առնելու իրենց հետագայ գործողութիւններում»: Երթին մասնակցում էին «Քաղաքացիական Անհնազանդութիւն» նախաձեռնութեան, «Հայրենիք ու Պատիւ», «Նոր ժամանակներ» կուսակցութիւնների, տարբեր հասարակական կազմակերպութիւնների ու մտաւորականութեան ներկայացուցիչներ: Լիբանանի քաղաքացի ժիւրայր Սեֆիլեանը եւ Հայաստանի քաղաքացի Վարդան Մալխասեանը ձերբակալուել են դեկտեմբերի 10-ին՝ զինուած ճանապարհով իշխանափոխութիւն նախապտրաստելու կասկածանքով: Դեկտեմբերի 12-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատենախորհուրդները բաւարարել է Ազգային Անվտանգութեան ծառայութեան միջնորդութիւնը ժիւրայր Սեֆիլեանին եւ Վարդան Մալխասեանը երկու ամսով կալանելու մասին:

«ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՕՐՅՆԵՐԳԸ» ԿԸ ՅՆՉԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ՕՐԵՆՔԻ ԽԱՄՏՈՒՄՈՎ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: Դեկտեմբեր 25-ին Հայաստանի Ազգային ժողովը երրորդ ընթերցմամբ եւ ամբողջութեամբ ընդունեց «ՀՀ օրհներգի մասին» օրէնքի նախագիծը: Դեռ երկու օր առաջ ՀՅԴ խմբակցութեան անդամ Գեղամ Մանուկեանը մտավախութիւն յայտնեց, որ օրհներգը չի հնչի «Ազատութեան» հրապարակում, քանի որ չեն հասցնի ընդունել, ապա նաեւ վաւերացնել:

Թեան նախագահը, կը վաւերացնի եւ ըստ էութեան այդ պահից մենք կ'ունենանք օրհներգ, մեզ ոչ մի փաստաթուղթ չի արգելում հնչեցնել «Մեր հայրենիքը» Դեկտեմբերի 31-ին՝ մի քանի րոպէ պակաս Նոր տարուայ գայլուց»: Այսինքն, օրհներգի խախտումը կը ներուի՞ այդ դէպքում, հարցադրմանը Թորոսեանը պատասխանեց. «Որեւէ տեղ գրուած չէ, որ, օրինակ, Դեկտեմբերի 31-ին, ժամը ահա այս պահին չի կարելի որեւէ մեղեդի ներկայացնել օրինակ հեռուստատեսութեամբ, այդ թուում նաեւ «Մեր հայրենիքը», ինչու՞ չէ»:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՍՈՒԹԻՒՆԸ ՆՈՒԷՐ ԿԸ ԼԻՆԻ

2007-ի փետրուարի 3-ին տեղի է ունենալու «Այլընտրանք» հասարակական-քաղաքական կազմակերպութեան միասնական հաւաքը, իսկ փետրուարի 20-ին հրապարակուելու է այդ կազմակերպութեան գործողութիւնների ծրագիրը: Այս մասին ՄԱԱ ակումբում յայտարարեց «Այլընտրանքի» հիմնադիր անդամներից մէկը՝ «Ժողովրդավարական Հայրենիք» կուսակցութեան նախագահ Պետրոս Մակէջեանը: Նրա ասելով, իրենց առաջիկայ գործողութիւնները կախուած են լինելու հասարակութեան աջակ-

ցութեան աստիճանից: Պ. Մակէջեանի փոխանցմամբ, «Այլընտրանքին» այսօր էլ համագործակցում է ընդդիմադիր թեւի մի քանի կուսակցութիւնների հետ, բայց, նրա կարծիքով, ընդդիմութեան միասնական լինելը նաեւ վտանգաւոր է, այնքանով, որ իշխանութիւնները կարող են հեշտութեամբ թուլացնել ու աստիճանաբար չէզոքացնել միասնական ընդդիմութեանը: «Այս փուլում միասնական լինելով, իշխանութեանը նուէր չի կարելի անել», - յայտարարել է «Այլընտրանքի» ներկայացուցիչը:

ՑՄԱՐ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԸ ԱՐԴԱՐԱՑՈՒԵՑԻՆ



Նախկին զինծառայողներ Ռազմիկ Սարգսեանը, Մուսա Սերոբեանը եւ Արայիկ Զալեանը, որոնք ցմահ ազատազրկումի դատաւարտուած էին երկու զինծառայողի սպանութեան մեղադրանքով

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Դեկտեմբեր 23-ին Վճռաբեկ դատարանի վճռով արդարացուեցին նախկին զինծառայողներ Ռազմիկ Սարգսեանը, Մուսա Սերոբեանը եւ Արայիկ Զալեանը, որոնք ցմահ ազատազրկման էին դատաւարտուել երկու զինծառայողի սպանութեան մեղադրանքով: Սիւնիքի մարզի առաջին ատենախորհուրդի դատարանը նրանց դատաւարտել էր 15-ական տարուայ ազատազրկման Մատաղիսի գործարարի զինծառայողներ Մովսէս Մկրտումեանի եւ Ռոման Եղիազարեանի սպանութեան մեղադրանքով: Մկրտումեանն ու Եղիազարեանը գործարարի անհետացել էին 2003 թուականի Դեկտեմբերի 24-ին, իսկ 15 օր անց յայտնաբերուել էին նրանց դիակները: Դատաւարտեալների փաստաբանները դիմել էին վերաքննիչ դատարան, որը, սակայն, խստացրել էր վճիռը՝ սահմանելով ցմահ ազատազրկում:

Շուրջ երեք տարի ազատազրկման մէջ մնալուց յետոյ այսօր 21-ամեայ Սարգսեանը, Սերոբեանը եւ Զալեանը, ովքեր շարունակ պնդում էին, որ մեղաւոր չեն, այսօր դուրս եկան «Նուբարաշէն» քրէակատարողական հիմնարկից: Հայաստանի նախկին զինդատախազ, այսօր արդարացուած զինծառայողներին ժամանակին մեղադրանք ներկայացրած Գագիկ Զհանգիրեանը մինչեւ դատարանի վճռի հրապարակումը «Ազատութիւն» ռադիոկայանի հարցին ի պատասխան ասաց, որ այժմ էլ համոզուած է, որ սպանութիւնները կատարել են այս երեք նախկին զինծառայողները: Իսկ որոշման հրապարակումից յետոյ Զհանգիրեանը արդէն չցանկացաւ պատասխանել հարցերին: Դատարանի որոշման հրապարակումից մօտ երկու ժամ անց արդարացուած զինծառայողները, որոնք ներկայ չէին նիստին, ազատարձակուեցին «Նուբարաշէն» քրէակատարողական հիմնարկից: Նրանց փաստաբան Զարուհի Փոստանջեանը «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց, որ սա «ոչ թէ փաստաբանների, այլ ողջ հասարակութեան յղթանակն է»:

Ա. ՄԱՐԳԱՐԵԱՆ. «ԲԱՐԳԱԲԱԾ ԶԱՅԱՍՏԱՆ-ՅՅԱ ՄՐՑԱԿՑՈՒԹԻՒՆ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԻ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Հայաստանի Հանրապետական կուսակցութեան (ՀՀԿ) նախագահ, երկրի վարչապետ Անդրանիկ Մարգարեանի խօսքերով, «արհեստական է հակադրութիւն փնտռել «Բարգաւաճ Հայաստան»-ի եւ ՀՀԿ-ի միջեւ. - «Այդպիսի խնդիր գոյութիւն չունի, մրցակցութիւն գոյութիւն չունի»: Իսկ «Բարգաւաճ Հայաստան»-ի ակտիվ գործունէութիւնը նա բացատրեց հետեւեալ կերպ. - «Նոր քաղաքական ուժ է մտել ասպարէզ, որն ակտիվօրէն ներկայացնում է ինքն իրեն»: ՀՀԿ ղեկավարը նշեց, թէ իրենք ուղղակի դեռ չեն սկսել քարոզել իրենց գործունէութիւնը: «Ժամանակի ընթացքում որքան ժողովուրդը ճանաչի նոր կուսակցութիւններին, նրանց գործունէութիւնը կը համեմատի հին կուսակցութիւնների հետ, եւ այդ յարաբերակցութիւնն, ըստ ինձ, մշտական չի լինելու, մնացուն չի լինելու, եւ փոփոխութիւնը լինելու է», -

շարունակեց նա: Մարգարեանը ասաց, թէ որեւէ ցուցակ չի կազմել, թէ քաղաքական որ ուժերը ներկայացուած կը լինեն երկրի Ազգային ժողովում յաջորդ խորհրդարանական ընտրութիւններից յետոյ. - «Այդ ցուցակը ես կը կարգամ ուղղակի ընտրութիւններից յետոյ»: Անդրադառնալով անցած շաբաթ նախագահ Քոչարեանի հեռուստահարցազրոյցում այդ կապակցութեամբ հնչածին («Բարգաւաճ Հայաստան», ՀՀԿ, ՀՅԴ, ՄԱԿ)՝ Անդրանիկ Մարգարեանը ասաց, որ դա նախագահի ցանկութիւններին ցուցակն էր. - «Ըստ իս, ինքը թուարկեց իր ցանկութիւնը»: Հարցին, թէ արդե՞ք «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը չի վարկաբեկում կառավարութեանը, երբ բարեգործական կարտոֆիլ է բաժանում գիւղացիներին, Մարգարեանը արձագանքեց. - «Կարտոֆիլի սերմ կամ ցանկացած բարեգործութիւն, որ անում են, դա կառավարութեան արածի երեւի գրօ ամբողջ, գրօ, գրօ մէկ տոկոսի չափով են»:

ԼՈՒՐԵՐ

THE WALL STREET JOURNAL-ՈՒՄ ՏՊԱԳՐՈՒԵԼ Է ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՅՕԴՈՒՄԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Ամերիկեան The Wall Street Journal թերթը այսօր հրատարակել է Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանի «Չնայած Յեղասպանութեանը» վերնագրով յօդուածը, որում նա յայտնում է, որ Եւրամիութեանը թուրքիայի անդամակցութեան բանակցութիւնները կ'ընձեռեն Հայաստանի եւ թուրքիայի միջեւ քաղաքակիրթ յարաբերութիւնների հաստատման՝ երկար սպասուած հնարաւորութիւնը:

«Մենք կարծում ենք, որ բանակցելով անդամակցութեան հարցով, գուցէեւ որպէս Եւրամիութեան ապագայ անդամ երկիր՝ թուրքիան կը նպաստի տնտեսապէս աւելի ուժեղ եւ աւելի կայուն հարեանութեանը», - գրում է Սերժ Սարգսեանը եւ յաւելում. - «Դա բխում է ինչպէս թուրքիայի, այնպէս էլ Հայաստանի շահերից»:

Հայաստանի պաշտպանութեան նախարարի կարծիքով, Եւրամիութեանը անդամակցութիւնը թուրքիան շատ աւելի կանխատեսելի կը դարձնէր, իսկ «կանխատեսելի հարեանի հետ գործ ունենալը աւելի դիւրին է»:

Նա համոզմունք է յայտնում, որ թուրք-հայկական յարաբերութիւնները եւ Հայոց Յեղասպանութիւնը կարեւոր գործօններ են, «որոնց քննարկումը, անշուշտ, անհրաժեշտ է Եւրամիութեանը անդամակցութեան հարցով թուրքիայի բանակցութիւնների ընթացքում»:
- «Կարեւոր է չիշել անցեալը՝ կանխելու համար մարդկութեան դէմ նման յանցագործութիւնների կրկնութիւնը»:

«Մենք ակնկալում ենք, որ Եւրամիութիւնը աւելի մեծ ներդրուածութիւն կ'ունենայ թուրքիայի եւ Հայաստանի միջեւ յարաբերութիւններում ճեղքում արձանագրելու ուղիների որոնմանը», - գրել է Սերժ Սարգսեանը:

Ըստ նախարարի, թուրքիայի հետ ապագայ յարաբերութիւնների հարցում Հայաստանը որդեգրել է շիտակ եւ գործնական դիրքորոշում. - «Մենք կ'ողջունէինք բնականոն դիւանագիտական եւ այլ յարաբերութիւնների հաստատումը՝ առանց նախապայմանների: Դա ներառում է ցեղասպանութեան ճանաչման հետ դիւանագիտական յարաբերութիւնների հաստատումը չկապելը: Ինչը աւելի կարեւոր է՝ մենք ցանկանում ենք նման դիւանագիտական յարաբերութիւն-

ները օգտագործել որպէս մեր յարաբերութիւնները ծանրաբեռնող հարցերը լաղթահարելու միջոց»:

«Լուծումները կը յայտնուեն միայն այն ժամանակ, երբ մենք ջանասիրաբար աշխատենք դրանց ուղղութեամբ՝ սկսելով բաց երկիւստութիւն հաստատելուց», - ընդգծում է Սերժ Սարգսեանը:

«Դժբախտաբար, բնականոն դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու՝ Հայաստանի ցանկութեանը թուրքիայի արձագանքը անցեալում եղել է Յեղասպանութիւնը ճանաչողներին պատժելը եւ սպառնալը», - գրում նախարարը:

Նա չիշեցնում է, որ թուրքիան մինչեւ օրս հրաժարուած է դիւանագիտական յարաբերութիւններ հաստատել Հայաստանի հետ, փակ է պահում Հայաստանի հետ սահմանը՝ չնայած աճող միջազգային ճնշմանը եւ դատաւարմանը, ամէն ջանք գործադրում է՝ մեկուսացնելու համար Հայաստանը միջազգային եւ տարածաշրջանային տրանսպորտային ծրագրերից եւ կառուցողական դեր չի խաղում Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնում:

«Այդուհանդերձ, Եւրամիութեանը թուրքիայի հնարաւոր անդամակցութիւնը Հայաստանը չի դիտարկում որպէս սպառնալիք ազգային անվտանգութեանը: Ժիշդ հակառակը՝ մենք յուսով ենք, որ թուրքիան կը փոխուի եւ աւելի պատրաստակամ կը լինի՝ դէմ յանդիման կանգնելու իր պատմութեանը եւ ապագային», - ընդգծում է Սերժ Սարգսեանը:

«Ոչ թուրքերը եւ ոչ էլ հայերը չեն գնալու տարածաշրջանից: Տրամաբանական լուծումը միմեանց հետ բնականոն յարաբերութիւններ ունենալն է», - ընդգծել է Հայաստանի պաշտպանութեան նախարարը: - «Ես չեմ ասում, թէ Հայաստանը պէտք է ամէն գնով կարգաւորի Անկարայի հետ իր յարաբերութիւնները: Ես ասում եմ, որ Հայաստանը պատրաստ է կարգաւորել թուրքիայի հետ իր յարաբերութիւնները առանց նախապայմանների»:

Իր յօդուածը նախարարն ամփոփում է թուրքիային ուղղուած կոչով. - «Մենք չենք կարող լինել մշտական թշնամիներ, եւ նոյնիսկ եթէ կարողանայինք, ապա անհրաժեշտութիւն եւ իմաստ չկայ նման թշնամութեան մէջ: Հետեւաբար, յանուն մեր ապագայի՝ շարժուենք առաջ»:

ԱՄԵՆԱՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՐՈՎՈՒՄԵՏԱԿԱՆ ԱՅՑԸ ՖՐԱՆՍԱ ՐԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՈՎ ՐՈՉԱԿՈՒԵՑ ՖՐԱՆՍԱՅԻ ԿԱՅՈՑ ԹԵՍԸ

Դեկտեմբերի 9-18-ը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Մայրապետի Պատրիարք - Ամենայն Հայոց Կաթողիկոսը հովուապետական այցով գտնուում էր Ֆրանսայում: Նորին Սրբութեան այցը նշանաւորուեց Ֆրանսայի թեմի հռչակմամբ:

Դեկտեմբերի 10-ին Փարիզի Սբ. Յովհաննէս Մկրտիչ Մայր Եկեղեցում մատուցուեց Հայրապետական Սբ. Պատարագ: Յընթացքում Սուրբ Պատարագի Արեւմտյան Եւրոպայի Հայրապետական պատուիրակի փոխանորդ Տ. Նորվան Եպիսկոպոս Ջաքարեանն ընթերցեց Հայրապետական սրբատառ կոնդակը, որով այսուհետ Փարիզի Առաջնորդութիւնը եւ Ֆրանսայի հայոց եկեղեցական համայնքները առանձնացուեցին Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակութիւնից եւ հռչակուեց որպէս Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Ֆրանսայի մէկ միասնական հայոց թեմ՝ Փարիզ առաջնորդանիստ կեդրոնով: Պատարագի ընթացքում, Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր օրհնութիւնը բերելով Ֆրանսահայ հաւատաւոր հօտին, նշեց. «Այսօր ուրախութիւն ամէնքիս՝ իրականութիւն է դարձել Մեր նախորդ երջանակալի Հայրապետների երազն ու իղձը՝ մէկ թեմական միաւորի ներքոյ համախմբումը հաւատաւոր մեր գաւակների, որով առաւել զօրացեալ, կուռ եւ միասնական պիտի լինի մեր Սուրբ Եկեղեցին, եւ նորովի զարթօնք պիտի ապրի հոգեւոր եւ ազգային կեանքը»:

Հայրապետական կոնդակով, Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ Տ. Գիւտ Արքեպիսկոպոս Նազգաշեանը համատեղութեան կարգով նշանակուեց Ֆրանսայի Հայոց նորակազմ թեմի առաջնորդական տեղապահ: Վեցամսեայ ժամանակում տեղապահը Վեհափառ Հայրապետի տնօրինութեամբ կը կազմակերպի թեմական խորհրդի եւ թեմակալ առաջնորդի ընտրութիւնները:

Յաջորդ օրը Նորին Սրբութիւնը հանդիպում ունեցաւ նորակազմ թեմի պատգամաւորների հետ, որի ընթացքում քննարկուեց թեմի կանոնադրութիւնը:

Այցի ընթացքում Վեհափառ Հայրապետը մասնակցեց նաեւ մի շարք յոբելիանական միջոցառումների: Դեկտեմբերի 9-ին Նորին Սրբութիւնը Փարիզում մասնակցեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան 100-ամեայ տարե-

դարձին նուիրուած հանդիսութեանը եւ իր օրհնութիւնը բերեց ՀԲԸՄ-ի անդամներին: Հանդիսութեան յաջորդ օրը առաջնորդանիստ Սբ. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցում Հայրապետական Սբ. պատարագից յետոյ տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն՝ ՀԲԸՄ-ի հանգուցեալ նախագահների եւ երախտաւորների հոգու խաղաղութեան համար:

Դեկտեմբերի 15-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետը Փարիզից մեկնեց Մարսել՝ Սբ. Թարգմանչաց եկեղեցու օծման 75-ամեակի յոբելիանի առիթով: 75-ամեայ եկեղեցում Դեկտեմբերի 17-ին մատուցուեց Հայրապետական պատարագ: Նորին Սրբութիւնը Հայրապետական օրհնութիւն ու պատգամը տուեց մարսելահայ համայնքին:

«Եկեղեցու շուրջ համախմբուած՝ դուք նոյն նուիրումով պիտի շարունակէք բարեգարգումը մեր ազգային-եկեղեցական կեանքի եւ առաւել արդիւնաւորէք յանուն Մայր Եկեղեցու պայծառութեան, Հայրենիքի գորացման եւ համայն հայութեան բարօրութեան մեր ջանքերը, որ հանապազ «պտուղ բարի առնէ»:

Արդարեւ, հաւատացեալ մեր ողջ ժողովրդի որդիական սիրով, հաւատարմութեամբ ու նուիրումով է շէն ու ծաղկուն Եկեղեցին մեր Սուրբ, մեր Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը»:

Հայրապետական պատարագի ընթացքում դարձեալ ընթերցուեց Հայրապետական կոնդակը Ֆրանսայի Հայոց թեմի հռչակման վերաբերեալ: Սրբազան արարողութիւնից յետոյ տեղի ունեցաւ Սբ. Թարգմանչաց եկեղեցուն կից գործող Սբ. Սահակ-Սբ. Մեսրոպ մշակութի կեդրոնի նոր մասնաշէնքի հիմնարկէքի արարողութիւնը: 30 տարի առաջ հիմնադրուած այս կեդրոնում էլ նախորդ օրը տեղի ունեցաւ մարսելահայ 9 բարերարներին «Սբ. Ներսէս Շնորհալի» շքանշանի յանձնման արարողութիւնը:

Մարսելում Ամենայն Հայոց Հայրապետը հանդիպեց եւ իր օրհնութիւնը տուեց նաեւ Համազգային վարժարանի սաներին, Մարսելի Ֆրանսահայ Երիտասարդաց Միութեան անդամներին, այցելեց ՀԲԸՄ Մարսելի կեդրոն:

Ամենայն Հայոց Հայրապետը հանդիպումներ ունեցաւ նաեւ Մարսելի քաղաքապետ Ժան Կլոդ Գոդեանի, ընդհանուր խորհրդի նախագահ Ժան-Նոյել Գերինիի եւ շրջանային խորհրդի նախագահ Միշել Վոզելի հետ:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ ԹՈՂԱՐԿԵԼ Է ՆՈՐ ՅՈՒՇԱԴՐԱՄՆԵՐ

Ինչպէս տեղեկացնում է ԱՌԿԱ գործակալութիւնը, Հայաստանի կենտրոնական բանկը դեկտեմբերի 25-ին շրջանառութեան մէջ է դրել մի քանի յուշադրամ: Դրանցից մէկը ոսկուց է եւ նուիրուած է յայտնի ֆրանսահայ նկարիչ Գառուի 100 ամեակին: Յուշադրամի անուանական արժէքը 10000 դրամ է: Այն պատրաստուած է 900 յարգի ոսկուց, ունի 22 մմ դիամետր եւ կշռում է 8,6 կրամ:

Կենտրոնական բանկը նոյն օրը շրջանառութեան մէջ է դրել մարշալ Բաբաջանեանի 100 ամեակին նուիրուած արծաթէ յուշադրամ: Դրա անուանական արժէքը 1000 դրամ է, ձուլուած է 925 յարգի արծաթից, ունի 38 մմ դիամետր եւ կշռում է 33,6 կրամ:

Քանդակագործ Յակոբ Գիւրջեանի 125 ամեակի կապակցութեամբ կենտրոնական բանկը շրջանառութեան մէջ է դրել ոսկէ յուշադրամ, որ ձուլուած է 900 յարգի արծաթից, ունի 22 մմ դիամետր եւ կշռում է 8,6 կրամ: Դրա անուանական արժէքը նոյնպէս 10000 դրամ է: Եւս ոսկէ յուշադրամ է թողարկուել, նուիրուած շախմատի համաշխարհային յիմնադրուած Հայաստանի տղամարդկանց հաւաքականի յաղթանակին: Դրա անուանական արժէքը նոյնպէս 10000 դրամ է, դիամետրը նոյնպէս 22 մմ, կշիռը նոյնպէս 8,6 կրամ եւ նոյնպէս ձուլուած է 900 յարգի ոսկուց:

ԱԲԴՈՒԼԱ ԳԻԼԸ ՆԵՐՔԻՆ ՐԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ ՐԱՅՆԻ «ՊՆԴՈՒՄՆԵՐԻ» ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Թուրքիայի արտգործնախարար Աբդուլա Գիւլը պետական հաստատութիւններին եւ ոչ կառավարական կազմակերպութիւններին կոչ է արել համագործակցել «ցեղասպանութեան մասին հայերի պնդումների դէմ պայքարում»:

«Չիհան» գործակալութեան փոխանցմամբ, ի պատասխան ընդդիմադիր պատգամաւորներից մէկի հարցադրմանը՝ Գիւլը յայտարարել է, թէ արտգործնախարարութիւնը եւ արտերկրում թուրքական ներկայացուցչութիւնները համակողմանի աշխատանք են տանում հայկական հարցի առնչութեամբ «պատմական փաստերը բացառելու» ուղղութեամբ:

«Գնահատելի կը լինէր, եթէ մեր համալսարանները, ոչ կառավարական կազմակերպութիւնները, մասնագիտական կազմակերպութիւնները եւ գործարարները աւելի մեծ ուշադրութիւն յատկացնէին այդ հարցին, եւ իւրաքանչիւր անհատ նպաստեր այդ ջանքերին», - ասել է թուրքիայի արտգործնախարարը:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

«ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԿԱՐՕՏ Է ԴՐԱԿԱՆ ԻՄՊՈՒԼՍՆԵՐԻ»

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՀՀ ՇԱԽՄԱՏԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ, ՀՀ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՓՈԽՆԱԿՆԱԳԱՀ, ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳՐՈՍՄԱՅՍՏԵՐ ՍՄԲԱՏ ԼՊՈՒՏԵԱՆԻ ՀԵՏ

- Ինչով էք բացատրում Հայաստանի այս տարուայ անցախադեպյաջողութիւնները:

- Իրօք, որ այս տարին շատ բեղմնաւոր էր եւ յաջողութիւններով լի: Դա նախեւառաջ թուրինում մեր ազգային հաւաքականի աշխարհի ախոյեան դառնալն էր, Հոկտեմբերին Եւրոպայի Կանանց Ակումբային Առաջնութիւնում մեր «Միկա» ակումբի ախոյեան դառնալը, ինչպէս նաեւ ոչ պակաս կարեւոր՝ նոյն Հոկտեմբերին Երեւանում անցկացուող պատանիների աշխարհի առաջնութիւնում մեր Զաւէն Անդրէասեանի աշխարհի ախոյեան դառնալը: Զաւէնը երրորդ հայ աշխարհի պատանի ախոյեանն էր Վլադիմիր Յակոբեանից եւ Լեւոն Արոնեանից յետոյ: Ուշագրաւ է, որ 17-ամեա՝ Զաւէնը ուժեղագոյնը ճանաչուեց 20 տարեկանների մրցաշարում: Վերադառնալով Թուրինի յաջողութեանը՝ պիտի ասեմ, որ չնայած շատերի համար այդ յաղթանակն անսպասելի էր, սակայն մենք՝ հաւաքականի անդամներս, մեկնելով Իտալիա՝ հաւատում էինք մեր ուժերին, մեր ապագայ յաղթանակին: Չէ՞ որ նախորդ օլիմպիադաներում մենք եւս մրցանակային տեղեր էինք զբաւել, ուրեմն եւ կարող էինք ակնկալել էլ աւելի մեծ նուաճումներ:

Խմբային յաղթանակի համար անհրաժեշտ է, որ անձի նշանակութիւնը իրեն զգացնել չտայ, հակառակը՝ որոշիչ լինի խմբային ընդհանուր մտածողութիւնը, միասնական նպատակը, համախմբուածութիւնը եւ բարձր կազմակերպուածութիւնը: Ի հարկէ, այս ամէնի հետ պէտք է խուճախ ընդհանուր անդամները լինեն բարձրակարգ խաղացողներ, լինի բարձրակարգ մարզիչ եւ առողջ բարոյա-հոգեբանական մթնոլորտ: Բոլոր այս գործօններն առկայ էին մեր խմբում: Եւ յետոյ, մեր յաղթանակում որոշիչ դեր խաղաց մի կարեւոր հանգամանք: Սպորտում, եւ մասնաւորապէս՝ շախմատում, գործում է մի յայտնի սկզբունք. եթէ համադրուած են երեք կարեւոր գործօններ՝ ճիշտ ներդրումները, հետեւողական աշխատանքը եւ առողջ միջավայրը, դրական արդիւնք անպայման լինում է: Իսկ մեր շախմատում այս երեք գործօններն այսօր հնարաւոր եղաւ համադրել, ահա եւ արդիւնքը իրեն սպասեցնել չտուեց:

- Իսկ չկայի՞ն խոչընդոտող գործօններ, կողմնապահութիւն, չէ՞ որ միշտ էլ սպորտում փորձ է արւում նախապատուութիւնը տալ քաղաքական ու տնտեսական առումով առաւել հզօր երկրներին, որոնց շարքում, ի հարկէ, Հայաստանին չես դնի:

- Ասուածն ընդունելի է այլ մարզաձեւերի համար, ասենք՝ ֆուտբոլի, որն առաւել քաղաքականացուած մարզաձեւ է, որտեղ մեծ փողեր ու մեծ շահեր կան: Ինչ վերաբերում է շախմատին, ապա մեր մարզաձեւին առաջին հերթին բնորոշ է ազնուութիւնը, այստեղ ինչ որ կատարուած է, կատարուած է տախտակի վրայ, արտաքին գործօնները գրեթէ ազդեցութիւն գործել չեն կարող, մրցավարից շատ քիչ բան է կախուած, կողմնապահութիւնը լիովին բացառուած է: Ահա եւ ստացուում է, որ յաղթել կարող է միայն ուժեղագոյնը, եւ մենք էլ վստահ էինք, որ մեզ խանգարել չեն կարող:

- Յաղթանակին յաջորդած հա-



մազգային ոգեւորութիւնը, ենթադրուելիք միջոցառումները՝ բովանդակային եւ քանակական առումով, համապատասխանում էին այդ յաղթանակի իրական արժեքին:

- Այդ յաջողութիւնը մեծ հոգեբանական լիցք հաղորդեց մեզ՝ հայերիս: Թէ՛ Հայաստանում, եւ թէ՛ դրսում ապրող հայերի համար դա ազգային հպարտութեան դրսեւորման լաւագոյն առիթ էր, նաեւ՝ ազգին միաւորելու լուրջ գործօն: Վստահ եմ, որ հենց նման պահերն են, որ պէտք է լաւագոյնս օգտագործել ազգային համախմբման, ազգի ինքնագիտակցմանն ուղղուած գործընթացներում, իսկ այն մարմինները, որոնք կոչուած են այդ գործընթացներն ապահովելու, պէտք է աչքաթող չանեն իրենց ընձեռուած նման հնարաւորութիւնները: Մասնաւորապէս, կարող էին աւելի ակտիւ լինել լրատուամիջոցները, ասենք՝ Հ1-ը կարող էր հաղորդաշար պատրաստել, ինչը, աւաղ, չարուեց: Ես ասում եմ «Աւաղ» մեր ժողովրդի համար, այլ ոչ թէ մեր, քանի որ յաղթանակն իրենց էր պէտք, այլ ոչ թէ մեզ:

Սակայն ես չէի ասի, թէ, ընդհանուր առմամբ, համընդհանուր ոգեւորութիւնը չէր համապատասխանում մեր յաղթանակի արժեքին: Օրինակ՝ անհնար է մոռանալ այն խանդավառութիւնը,

որով մեզ դիմաւորում էին Հայաստանի մարզեր այցելելիս: Բոլոր տեղերում էլ լեփ-լեցուն դահլիճներ էին, համընդհանուր բարձր հետաքրքրուածութիւն ու ոգեւորութիւն: Նոյն բանը չեղաւ Երեւանում, այդ իսկ պատճառով էլ երեւանցու մօտ ստեղծուած է այն տպաւորութիւնը, թէ յաղթանակից յետոյ «մեզ շատ արագ մոռացան»: Պատճառը, կարծում եմ, պէտք է փնտռել միայն մասշտաբների եւ դրանից բխող կազմակերպչական խնդիրների մէջ. Երեւանում նման բան կազմակերպելը շատ աւելի բարդ կը լինէր, եւ չես կարող ասել, թէ ինչ արդիւնք կ'ունենար:

- Իսկ ինչպէ՞ս կը գնահատէք մեր ազգային ֆուտբոլում ներկայումս տիրող իրավիճակը: Արդեօք այս ոլորտում մենք գործ չունենք դժգոյն արդիւնքից աստիճանաբար բխող համագային անտարբերութեան հետ:

- Աւաղ, ֆուտբոլում մեզ չչաջողուեց պահպանել այն աւանդութիւնները, այն պոտենցիալը, որ մենք ժամանակին ունէինք: Ֆուտբոլը մեծ ներդրումներ է պահանջում, այստեղ ամէն ինչ շատ աւելի բարդ է, քան շախմատում: Ճիշտ է, շախմատում էլ մենք շատ կորուստներ ունեցանք, բայց հիմնական ներուժը յաջողուեց պահպանել, իսկ այդ ներուժը հիմնականում պայմանաւորուած էր ազգային եւ անձնական յատկանիշներով: Այնուամենայնիւ, ֆուտբոլում դեռ ամէն ինչ անյոյս կորած չէ: Մեր ժողովուրդը կարօտ է դրական իմպուլսների, եւ բաւական է, որ լինեն յաջողութիւնները, եւ համագային հետաքրքրուածութիւնը նորից իրեն զգացնել կը տայ: Ես չիշում եմ, մի քանի տարի առաջ էր, երբ մեր ազգային հաւաքականը խաղում էր Սպանիայի ազգային հաւաքականի հետ՝ նրա դաշտում: Չնայած, ի վերջոյ, մերոնք պարտուեցին, բայց ցուցադրեցին որակեալ, դիտարժան խաղ, եւ յաջորդ օրը չիշում եմ, թէ իմ շրջապատում ինչպէս էին շատերը ոգեւորուած քննարկում այդ խաղը, բոլորի մօտ յոյս էր ծագել, որ դա նոր որակների դրսեւորում է:

Այդպէս էլ հիմա կը լինի: Ուղղակի պէտք է լուրջ, պրոֆեսիոնալ եւ համակարգուած մօտեցում ցուցաբերել եւ գործի դնել վերը նշուած երեք կարեւոր գործօնների համադրումը: Հերիք է, որ մեր ֆուտբոլում սկսեն յաղթանակները, եւ հասարակական վերաբերմունքն էլ միանգամից կը փոխուի:

- Մեր գրոյցի վերջում, քանի որ անփոփոմ ենք անցնող տարին եւ սպասումներով մտնում նոր տարին, կը խնդրէի, որ յաջորդ տարուայ համար մաթթաքներ յղէիք մեր ժողովրդին:

- Նախեւառաջ կը ցանկանայի, որ ապրէինք խաղաղութեան եւ միասնութեան մէջ, որ մեր ազգին բնորոշ իմաստութիւնը օգտագործենք լաւը փնտռել-գտնելու, իսկ գտնելուց յետոյ էլ՝ այն պահպանելու ուղղութեամբ: Թէ՛ չէ, ինչքան արժէքներ այդպէս էլ չենք կարողացել պահպանել:

Կը ցանկանայի նաեւ, որ իւրաքանչիւրս ուրախանար իր հողի վրայ ապրելու փաստով: Նաեւ յիշելով, որ յաջորդ տարին մեզ մօտ խոստանում է բաւական բարդ ու լարուած լինել՝ կապուած քաղաքական ընտրութիւնների հետ, շատ կը ցանկանայի, որ քաղաքական թոհուբոհերը, խաղերը ոչ մի կերպ բացասական ազդեցութիւն չունենային մեր հասարակութեան վրայ: Եւ թող որ այդ ընտրութիւններում, եւ ինչու ոչ՝ ընդհանրապէս մեր կեանքի բոլոր բնագաւառներում, գերիշխի մեր շախմատի ամենակարեւոր սկզբունքը՝ ազնուութիւնը: Կը ցանկանայի նաեւ, որ մեր միւս մարզաձեւերը եւ, մասնաւորապէս, ամենասիրուածը՝ ֆուտբոլը, հետեւէին մեր շախմատի օրինակին: Թող որ մեր ֆուտբոլի ազգային հաւաքականը յաջորդ տարի վերջապէս կոլ խփի, ինչը չչաջողուեց անել ամբողջ այս տարուայ ընթացքում, սկսի ուրախացնել մեզ իր յաղթանակներով:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ՝
ԼԵԻՄՆ ԳԷՈՐԳԵԱՆԻ
ՀԵՏՔՕNLINE

HOMENMEN PRESENTS
BIG BEAR 2007
January 13-15, 2007
HOMENMEN is hosting it's annual Big Bear Winter Trip. Bring your family and friends along and join the fun from Saturday January 13 to Monday January 15 (Martin Luther King Holiday).
\$125/Adult
\$85/Child
Includes:
Room/Board
Food
Games
Live Music
FOR RESERVATIONS
CONTACT: Razmig 818-590-2824
Z.S.U.

ԱԶԳԱՅԻՆ

15-ՐԴ ԴԱՐՈՒ ՁԵՌԱԳԻՐ ՄԱՏԵԱՆ ՄԸ «ԱՌՁԵՌՆ ԾԻՍԱՐԱՆ-ՄԱՇՏՈՅ»

ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ Ա. ՔԶՆՅ. ԱՐՋՈՒՄԱՆՆԵԱՆ

Նոր Սերունդ Մշակութային Միութեան ատենապետ Յարութիւն Տէր Դաւիթեանի կը պատկանի հնադարեան հայերէն ձեռագիր մը գոր ուսումնասիրելու առիթը ունեցայ, եւ որուն մասին ներկայ հակիրճ նկարագրական կը գրեմ, նախապէս յայտնելով որ ձեռագրին տիրոջը ես է որ նշանակած եմ, «Առձեռն Ծիսարան-Մաշտոց», քանի որ գրքին սկիզբն ու վերջը էջեր կը պակսին եւ որեւէ նշում չկայ այդ մասին: Բովանդակութեան հիման վրայ է որ նշանակեցի ձեռագրին տիրոջն ինքն իր:

Կենսական էր գիտնալ գրութեան թուականը, եւ կարծէք հրաշքով մը երբ կը կարդայի երախայի մահուան արարողութեան մէջ «Ողբ մահուան տղայի» տողը, բոլորովին նորայայտ եւ ներշնչիչ գրութիւն մը ինքնին, հոն յանկարծ կը յայտնուէր տղուն մահուան «ի լուծ հարիւր եօթնասուն թուականին, եւ համարով ամբ որ անցին ու թ աւելին» տեղեկութիւնը, արդէն իսկ կը յայտնուէր նաեւ ձեռագրին գրութեան թուականը ըստ հայկական տոմարի՝ 870+8=878, որուն վրայ 551 գումարելով կը ստացուի Քրիստոսի թուականին 1429 տարին:

Մատենան կը բովանդակէ Պապի, Թաղման, Ջրօրհնէքի, Ռոնլուայի եւ Խաչօրհնէքի աւանդական կարգերը, կարեւորութեամբ նշելով նաեւ որ անոնք իրենց բնիկ ու նախնազոյն բնագիրներով կը ներկայանան, եւ ոչ թէ կրճատեալ, ինչպէս ցոյց կուտան մեր այսօրուան Մաշտոցները: Ձեռագիրը անպայման առձեռն գործածութեան համար գրուած է եւ գործածուած քահանաներու կողմէ, սերունդէ սերունդ, հատորի մը մէջ ի ձեռին ունենալով ամէն ինչ որ պէտք պիտի ըլլար ծխատէր քահանայի մը համար:

Մատենան քայքայուած վիճակի մէջ է, ունի 172 թերթ, պակաս թերթերով՝ սկիզբէն եւ վերջաւորութենէն, երբեմն ալ թերթերու անկումի հետեւանքով անոնք գետեղուած պատահական տեղեր: Լուրջ խմբագրութեան կարիքն ունի, քանի որ տեսանք նաեւ որ այլ ձեռագրի մը պրակը եւս ներդրուած է, տարբեր գրիչի մը ձեռքով՝ բոլորգիր եւ աւելի խոշոր տառերով, որ կը հաստատէ մեր կարծիքը, թէ յետագայի երէցներէն մին իր գրած կամ գտած Մաշտոցէն առնելով գետեղած է այս ձեռագրին մէջ:

Գեղարուեստական արժէքի կողմէ համեստ է ձեռագիրս այն իմաստով որ լուսանցազարդերը եւ կամ գլխագիր թռչնազիւրերը բարձրորակ չեն եւ սակայն հնամենի բոլոր կուտայ գլխաւոր էջերուն: Գրութիւնը բոլորգիր է, չիշատակարան չկայ, գրողին եւ ստացողին անունները չկան: Նիւթը թուղթ է եւ չափը՝ 15x10 սմ: Բոլորովին ուշ շրջանի մի քանի անուններ լուսանցներու վրայ գրուած են, ինչպէս «Պրն. Խաչատուր Բաղ» (դասարան) որոնք արժէք չեն ներկայացներ, բացի այլ անունի մը պարագային, ձեռագրին թեհարանի մէջ գործածուած ըլլալը հաստատող:

Մեր ուշագրութեան առարկայ դարձան երկու «Ողբ»երը, մին «Վասն թաղման ննջեցելոց», եւ միւսը՝ «Ողբ թաղման տղայի»,

որոնք չեն անցած տպագրեալ հին կամ նոր Մաշտոցներու մէջ եւ անձանօթ են մեզի: Ձանոնք հարկ է ամբողջութեամբ անգամուան մը համար հրատարակել ի գիտութիւն բանասէրներու եւ գրականագէտներու, տրուած ըլլալով անոնց գերգգայուն ոճն ու բովանդակութիւնը, ոսկեղնիկ գրաբար լեզուով գրուած: Արտագրելով զանոնք պիտի ուղարկենք Երուսաղէմ ուր «Սիոն» ամսագրին մէջ շուտով լոյս կը տեսնեն: Իսկ հոս կ'արտագրեմ տողեր միայն, տալու համար նախաճաշակը այդ գոհար բանաստեղծութեանց:

«Ողբ Թաղման Տղայի»

Արարիչն արարածոց մեզ բարկացաւ. քաղցրը բնութիւն աստուածային մեզ դառնացաւ. սուրբն հրեղին այսօր յերկնից տարածեցաւ. հուրն ի տանն աստուածային բորբոքեցաւ:

Շողկ ու վայ հազար բերան



զինչ գործեցաւ. նորապսակ հարսն ու փեսան բաժանեցաւ. քանի մահուկ մորմնքալի ի հող դարձաւ. եւ թէ քանի մայր որդեմեռ մորմնքեցաւ:

եւ թաւալին յառջեւ ծնողին ողորմագին. աղիողորմ ի գիրկըս մօրն նուաղին. որպէս ծաղիկ գարնանային թարշամէին:

«Ողբ Վասն Թաղման Ննջեցե-

Ամենդ տղայքն ի հրեշտակէն խոցեալիքին.

Շար-ը էջ 15

Advertisement for Homenmen Ladies Society New Year's Eve Dinner Dance. The ad features a decorative border with balloons and confetti. The text includes: Homenmen Ladies Society, New Year's Eve Dinner Dance, Sunday, December 31st, 2006, Starting at 8:00pm, Homenmen - Garo Soghanalian Hall, 1060 N. Allen Ave., Pasadena, Entertainment by Hratch Bogharian & D.J. Johnny, Donation \$50.00, For Reservations Please Call: Dzonig (626) 429-8366 or Gasime (626) 755-4773.

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

**ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ՝
25-ԱՄԵԱՅ ՅՈՒԲԵԼԻԱՐԸ**

Երէկ էր կարծես, երբ Արեւմտեան Միացեալ Նահանգներու այս հեռաւոր, բայց պայծառ երկնքին տակ առաջին Հայ Աւետարանական Վարժարանը հիմնելու լուսաշող գա-

նի Ծնողա-Ուսուցչական կազմակերպութեան տարեկան ճաշերոյթ-պարահանդէսն էր որ տեղի ունեցաւ Ուրբաթ, Նոյեմբեր 17ի երեկոյեան ժամը 7:30էն սկսեալ, Կլէնտէյլի



Չախէն աջ՝ տնօրէն Յովսէփ Ինճէնիֆեան, Կրէկ Մարթայեան, Տիկ. Տի Զորլեան եւ Տոքթ. Հրայր Աթիֆեան

ղափարը ունեցան խումբ մը նուիրեալներ: Մայրենի լեզուին եւ աւետարանական դաստիարակութեան նկատմամբ անոնց ունեցած անսասան հաւատքը նորածին վարժարանը դրաւ ամուր եւ հաստատ հիմերու վրայ եւ ահա, ան դարձած է 25 տարեկան:

Պրէնտիլիու Քըլլէքըշլի շքեղ սրահին մէջ: Ներկայ էին աւելի քան 300 խանդավառ շրջանաւարտներ, ծնողներ, աշակերտներ, ուսուցիչներ, նախկին եւ նոր հոգաբարձուներ, ինչպէս նաեւ Մերտինեան մեծ ընտանիքի անդամներ, բարեկամներ: Ծնողա-Ուսուցչական Մարմնի



Ծնողա-Ուսուցչական վարչութեան անդամները

2006-2007 ուսումնական տարեշրջանին Մերտինեան Վարժարանը կը բոլորէ իր 25-ամեակը եւ յաջորդական քանի մը ձեռնարկներով պիտի յիշատակուի այս հանգրուանը:
Անոնցմէ առաջինը վարժարա-

ատենապետուհի Տիկ. Տի Զորլեանի բարի գալուստի խօսքէն ետք, սեղաններու օրհնութիւնը կատարեց Պատուելի ձէք Զորլեանը, ապա յաջորդաբար խօսք առին վարժա-

Մար. ք էջ 15

**ԳԻՆԵՉՕՆ ՊԵՏՐՈՍ ԹՈՎՄԱՍԵԱՆԻ «ՀԱՅԿԱԿԱՆ
ԼԵՌՆԱՇԽԱՐՅԸ ԵՒ ՄԻԶԱԳԵՏՔԸ» ԳՐՔԻ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ**

Կիրակի, Նոյեմբեր 12, 2006ին, Գալիֆոռնիոյ Հայ Երիտասարդաց Միութեան Գրական Յանձնախումբի կազմակերպութեամբ տեղի ունեցաւ գինեձօնի երեկոյ, նուիրուած Միութեան անդամ՝ ճարտարագէտ, հայոց պատմութեան ուսուցիչ, մտաւորական, հասարակական գործիչ Պրն. Պետրոս Թովմասեանի «Հայկական Լեռնաշխարհը եւ Միջագետքը» գրքի հրատարակութեան առիթով: Երեկոյին ներկայ եղան մտաւորականներ, իմբազիրներ եւ 120 անդամ-անդամուհիներ:

Երեկոն սկիզբ առաւ Պերճ Զատոյեանի հակիրճ բացման խօսքով որմէ ետք բեմ հրաւիրուեցաւ վարչութեան խորհրդատու անդամ Պրն. Շանթ Յովասափեանը որպէսզի օրուայ առնչութեամբ վարչութեան խօսքը փոխանցէ ներկաներուն:

Պրն. Յովասափեանին յաջորդեց Պրն. Պերճ Զատոյեան՝ ներկայացնելու Պրն. Թովմասեանի քանի մը տասնամեակներու բեղուն եւ ժրջան գործունէութիւնը:

Խօսքի ընթացքին Պրն. Զատոյեանը նշեց որ հեղինակը աւելի քան երեք տասնամեակներ ուսանեցաւ եւ ուսուցանեց հայոց պատմութիւնը, հայ երիտասարդութեան ջամբեց հայեցի դաստիարակութիւն եւ ազգային գիտակցութիւն: Ան թրծեց ու կերտեց հայ տիպար երիտասարդը, պատրաստեց փառանք մը որ զբաղեցաւ հայ դպրութեամբ ու մշակոյթով:

Ներկաները մեծ հաճոյքով ունկնդրեցին օրուայ բանախօս Պրն. Յովհաննէս Աճմարանեանը որ համապարփակ եւ բովանդակալից ձեւով ներկայացուց գիրքը: Յարգարժան բանախօսը եւ Պերճ Զատոյեանը երկուքն ալ արծարծեցին այն կէտը որ գիրքը իր տուեալներով կու գայ անգամ մը եւս փաստելու այն իրողութիւնը՝ որ հայ ժողովուրդը եղած է բնիկ ժողովուրդը հայկական լեռնաշխարհին, փաստելու որ մենք տէրն ենք այդ հողերուն: Պրն. Աճմարանեանը լաւագոյն ձեւով մեկնաբանեց գրքի տեղեկութիւնները հայկական լեռնաշխարհի եւ միջագետքի միջեւ եղած տնտեսական, մշակութային յարաբերութիւնները եւ հայ ժողովուրդի ազդեցութիւնը մերձաւոր երկիրներու վրայ: Նաեւ բարձր գնահատեց գիրքի պատմագիտական տուեալները, որոնք տոկոսային հաշուարկութիւններով եւ ցուցակներով ներկայացուած քարտէջ են:

Խօսք առաւ նաեւ պատմաբան Պրն. Կարէն Մուսայէլեան՝ որու գիրքէն Պրն. Թովմասեանը օգտուած է որպէս աղբիւր, Պրն. Մուսայէլեան բարձր գնահատեց հեղինակին աշխատանքը եւ շնորհաւորեց գիրք իր այս մեծ պատմագիտական աշխատանքին համար, Պրն. Մուսայէլեան ճիշդ տեսութեամբ անդրադարձաւ ու պարգաբանեց այն սխալ վարկածը որ ըստ որում հայ ժողովուրդը եկուոր է եւ ոչ բնիկ ժողովուրդն է հայկական լեռնաշխարհին:

Բեմ հրաւիրուեցաւ գիրքի հեղինակը իր խօսքը արտայայտելու: Ան շնորհակալութիւն յայտնեց Ք.Հ.Ե. Միութեան վարչութեան եւ գրական իմբազիրն այսպիսի ձեռնարկ մը կազմակերպելուն համար, նաեւ մասնաւոր շնորհակալութիւն յայտնեց իր տիկնոջ Տօքթ. Հրաչուհի Թովմասեանին որու ցուցմունքները մեծ ազդեցութիւն ունեցած են գիրքը այս մակարդակով պատրաստելու համար:

Հեղինակը անդրադարձաւ այն դրդապատճառներուն որոնք գիրք մղեցին եւ աւելի կորով տուին այսպիսի յայնածաւալ աշխատանքի մը յանձն առնելու դրդապատճառներէն գլխաւորներն են՝ նման վերնագրով աշխատանքի մը կարիքը, հայ դատի աշխոյժ իրավիճակը Հայաստանի անկախութիւնը ու պետականութիւնը, Արցախեան ազատագրումը:

Պրն. Թովմասեանը յայտնեց թէ այս գործը որպէս հաւաստի աղբիւր կրնայ հանդիսանալ այլ մատմագիտական ուսումնասիրութիւններու, առաւել կրնայ օգտակար ըլլալ տարածաշրջանի ժողովուրդները գիրքը ճանչցնելու ու մերձեցնելու:

Արժանապատիւ Տ. Յովսէփ ՔՏՆյ. Յակոբեանը բեմ հրաւիրուեցաւ գինեձօնի արարողութիւնը սկսելու եւ ապա իր օրհնութեան խօսքը ուղղելու:

Արդարեւ ամէն մի հայ տուն հարկաւոր է այս գիրքը ունենալ իր գրադարանին մէջ: Երեկոյի աւարտին հեղինակը մակագրեց վաճառուած գիրքերը եւ ներկաները մեծ գոհունակութեամբ ու տպաւորութիւններով հեռացան սրահէն:

«Հայկական Լեռնաշխարհը եւ Միջագետքը» գիրքը կարելի է ձեռք բերել գաղութիս Ապրիլ, Պերճ եւ Սարդարապատ գրատուններէն, ինչպէս նաեւ հետեւեալ կայքէջերէն՝ narek.com կամ book.am;scvbvcv:

Season's Greetings
Շնորհաւորութիւններ
Մոնախան Օպտիմալ Մոնիթոր

ՊԵՏՐՈՍ ԵՒ ՄԻԱՍԱՆԹՕ
ՄԱՐՈՆՆԵԱՆ

818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205
ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"



Mission Liquor & Wines

WE WILL BEAT ANY ADVERTISED PRICE!

Chivas Regal
12-Yr Scotch
750ml
\$16.⁹⁹
1.75L
\$32.⁹⁹

Johnnie Walker
Black Label
750ml
\$20.⁴⁹
1.75L
\$47.⁹⁹

Dewar's
12-Yr Scotch 750ml
\$16.⁹⁹
White Label 1.75L
\$24.⁹⁹

Grey Goose
Vodka 750ml
\$20.⁹⁹
Belvedere
Vodka 750ml

Absolut
Vodka
750ml
\$13.⁹⁹
1.75L
\$25.⁹⁹

Hennessy
Cognac 750ml
VS
\$20.⁴⁹
VSOP
\$29.⁹⁹

Russian Standard
Vodka
750ml
\$13.⁹⁹

Patron
Anejo/Reposado/Blanco
750ml
\$33.⁹⁹

Stolichnaya
Vodka 1.75L
\$17.⁹⁹
1800 Tequila
Blanco/Reposado
750ml

Courvoisier
Cognac 750ml
VS
\$16.⁹⁹
VSOP
\$26.⁹⁹

Johnnie Walker
Red Label
750ml
\$14.⁴⁹
1.75L
\$28.⁹⁹

Sauza
Tres Generaciones
Tequila 750ml
\$22.⁹⁹
Anejo/Blanco/Reposado

Level
Vodka 750ml
\$17.⁹⁹
Imperia
Vodka 750ml

Courvoisier
Cognac XO 750ml
\$79.⁹⁹
Hennessy
Cognac XO 750ml
\$94.⁹⁹

Johnnie Walker
Blue Label 750ml
\$139.⁹⁹
Dewar's
Signature 750ml

1801 E. Washington Blvd., Pasadena, CA 91104
Liquor (626) 794-7026 • Tobacco (626) 797-0500
Հիմա իսպանիք այն մասին թէ ինչ առնչութիւններ ունեցաւ Կիլիկիան, խաչակիրներու արշաւանքին հետ:

Խաչակիրներու առաջին արշաւանքի ժամանակ 1097թուին ամբողջ «Փրանկներու» բանակը Տաւրոսի հիւսիսային կողմը կը գտնուէր, Ասորեստան անցնելու համար: Անոնք հանդիպեցան «Կիլիկիան խրթնահասնոցային»: Անցնիլ արդեօք Տաւրոսը թէ՞ խուսափիլ: Տարբեր կարծիքներ կային, այդ հարցի վերաբերեալ եւ այդ բնական էր եթէ հաշուի առնեն առաջնորդներու տարածքային հաւակնութիւնները:

Զօրքերու հրամանատարներէն

էին, Պաղտին Բուլոնցին եւ Տանկրեցտը: Պաղտին Բուլոնցին, կէս մը անանկ ընտանիքէ կու գար: Ան գտարին փառասէր էր: Խելացի ըլլալով ան հասկցած էր տեղացիներու հետ համագործակցելու անհրաժեշտութիւնը, աւար ձեռք բերելու համար: Ան գուրկ էր ժառանգութեան, ընտանիքին կրտսերը ըլլալուն պատճառով: Իսկ Տանկրեցտը, խաչակիրներու արշաւանքներու «հերոսը» կը նկատուէր:

1097 թուի Սեպտեմբերին, Պաղտին Բուլոնցին, եւ Տանկրեցտը բաժնուեցան ընդհանուր գործէն: Անցնելով Տաւրոսը, անոնք կը մտնեն Կիլիկիա իրենց բաղտը փորձելու: Պաղտինը քաջատեղեակ էր հայերու վիճակին, իսկ Տանկրեցտը գիտէր Արաբերէն եւ լայն տեղեկութիւններ կը ստանար Բիւզանդացի, նորման վարձկաններէն:

Ակնյայտ էր որ, անոնք աւելի տեղեակ էին տեղի պայմաններուն քան մնացած բոլոր առաջնորդները:

Սակայն անոնց ձգտումները չէին կրնար իրականութեան վերածուիլ Եւրոպայի աւատատիրական օրէնքներու պատճառով: Հետեւաբար անոնք վճռեցին գործել առանձին: Ատկէ զատ, կեղրոնական իշխանութիւններէ զուրկ Կիլիկիան, շատ յարմար էր այս տեսակ ձեռնարկումներու:

Ժամանակակից Ռաուլ Կանցը կը գրէր:

«Այդ ժամանակ ճակատագրի բերումով թիւրքերը դարձեր էին երկրի տէրը, իսկ յոյները անոնց ծառաները: Իսկ զարիթափի լեռներուն վրայ ապրող հայերը կը պաշտպանէին իրենց ազատութիւնը: (Տես, Կլոդ Մուլթաֆեան, Կիլիկիան Կայսրութիւններ, Խաչմերուկում, Երեւան, 2001 թ. էջ 140):

Տանկրետը կ'ուղեւորուի Տարսոն ոչ այնքան հեշտ կերպով, բայց արագ ճանապարհով: Այդ ժամանակ Տարսոն քաղաքը կը կառավարուէր բիւզանդական զօրանոցի մը կողմէ: Քաղաքը կը բնակուէր յոյներով եւ հայերով: Թուրքեր ետ կը քաշուէին, որովհետեւ Նորմաններու զօրքին կը միանար ուրիշ աւելի հզօր քրիստոնէական բանակ մը, Պաղտին Բուլոնցիի ֆլամանցիներու բանակը:

Մրցակցութիւնը երկու խաչակիր արկածախնդիրներու միջեւ, չէր կարող չյառաջացնել ընդհանրումներ:

Պաղտին Բուլոնցին գրաւեց Կիլիկիայի Տարսոն քաղաքը, իլեւով գայն, Տանկրետէն, որ թիւրքերու համաձայնութեամբ եւ գործակցութեամբ քաղաքէն ներս իր մարդերով մուտք գործած էր:

Շատ անգամներ Կիլիկիան դարձեր էր խաչակիր ասպետներու եւ անոնց զօրքերուն գոհը: Ժամանակակից շատ հեղինակներ կը յիշեն Կիլիկիոյ հայերու ջերմ ըն-

Շարք էջ 19



HARUT DER-TAVITIAN
License #0B28270

1807 W. Glenoaks Blvd., Suite 202
Glendale, CA 91201

Tel.: 818/502-3233
Fax: 818/502-3244
Pgr.: 818/608-9898
info@excelhye.com
www.excelhye.com

AUTO • HOME • LIFE • HEALTH • DISABILITY • COMMERCIAL

ՏԵՍԱԿԵՏ

ԵՐԿԻՍՈՍՈՒԹԻՒՆ

ԴՈԿՏ. ՕՆՆԻԿ ԲԷՇԻՇԵԱՆ

Ն.Գ. փոխան Յետ Գրու թեան՝ Եթէ հետաքրքրուող կայ տակաւին, երկու նշում:

Ա. Այն որ լուրջ յարգանք ունիմ Հայ Աւետարանական եւ Հայ Կաթողիկէ համայնքներուն հանդէպ եւ շնորհակալ եմ իրենց տարած անգուգական աշխատանքին համար: Սակայն հարցի մը ոճը, եւ խորքը կրնամ գանազանել:

Բ. Մտածումներս պարսաւանք կամ պատասխան չեն, այլ երկխօսութիւն: Այսինքն, հիմնուելու առաջինի խօսքին, եւ այդ ունենալ որպէս մեկնակէտ, եւ շարունակել մտածումը:

Նաեւ անշուշտ շնորհակալ եմ այն խմբագիրներուն որոնք, հաւանաբար անհամաձայն ըլլալով հանդերձ, տեղ տուին մտածումներուս:

Ուրեմն, Պատուելի...

Եթէ մեղքս լեզուական դարձուածքի մասին է՝ թող այդպէս ըլլայ: Եկեղեցի նաեւ կը նշանակէ ժողովուրդ: Այո: Իսկ շատ մը բառարաններ, ժողովարանի իմաստը կու տան որպէս պաշտամունքի վայր: Բայց մենք նիւթէն կը շեղինք՝ գոնէ ես:

Սիրելի Պատուելի, Ազգայնագետները նաեւ եկեղեցի, ժողովուրդ ու պաշտամունք, կրնանք ըսել թէ՛ կը նոյնացնէ: Բայց մենք քաջ գիտենք թէ այդ ստուգաբանութեամբ չէ որ այսօր, եւ 19-20րդ դարուն, «եկեղեցի, ժողովարան, պաշտամունք» բառերը փոխաբերաբար կ'օգտագործուին ոմանց կողմէ:

Ամենայն դէպս, հարցը այդ չէ: Եկեղեցին մեզ համար՝ Հայաստանեայց Առաքելական եկեղեցոյ համար՝ ինչպէս նաեւ կաթողիկէ եւ ուղղափառ եկեղեցիներուն համար կը նշանակէ միւլտիպլ օժտու սրբատեղի եւ ոչ թէ հաւաքավայր՝ թէկուզ պաշտամունքի ու աղօթելու համար: Մեզ համար այս միայն ծէս չէ այլ խորհուրդ է, (Sacrament): Կը ներէք Պատուելի եթէ ժողովարանները աղօթքներով հիմնաւորելը, օժել չհամարեմ, որուն անշուշտ համաձայն չէք դուք, հասկնալիքն է:

«Եկեղեցին Հայկական եւ աչքս գոց կը տեսնեմ...»:

Ու, «Լուսաւորչի կանթեղն անմար...»

Նիւթէն կը շեղինք: Պաշտամունքի ժամանակ, անգլերէնէ թարգմանուած երգերը՝ որքան ալ վարժ ու հաճելի ըլլան ունկնդիրներուն, Հայ եկեղեցական շարականներու ու եկեղեցոյ մեղեդիներուն չեն հաւասարի որ շատերուն համար: Ատենին, թրքերէնով կ'երգուէին այդ «Իրահի»ները, մատչելի ըլլալու համար համայնքի անդամներուն, «հաւատացեալներուն»: Տակաւին չյիշել թրքերէն բառերով հայերէն տառերով «Սուրբ գիրքերը» - իմա՝ որոշ տեսակի «հաւատացեալներուն», որ չզրկուին իրենց պաշտամունքէն, քանի այդ որակի «հոգեւոր» ըլլալը նախամեծար է հայկականութեան: Պատարագը խորհուրդ է:

Կրկնել Պղատոնի քարայրի օրինակը:

Հարցը Հայկականութեան նախամեծար ըլլալն է:

Ես, դեռեւս միակն եմ, այսպէս մտածողը, թէ Հայերը ոչ թէ առաջին ժողովուրդն են որ Քրիստոնէութիւնը որպէս պետական կրօնը ընդունեցին, այլ առաջին ժողովուրդն են որ Քրիստոնէական տիեզերականութենէն անջատուելով,

հիմնեցին Ազգային եկեղեցի՝ Հայաստանեայց Առաքելական Սուրբ եկեղեցին: Աւելին, թարգմանիչները, կրկին, առաջին նախադասութիւնը որ հայերէնի վերածեցին, - եւ ոչ թէ թարգմանեցին - «ճանաչել գիմաստութիւն եւ գիրատ, իմանալ զբանս հանճարոյ...»ն էր եւ ոչ թէ «գԱստուած այնպէս սիրեց աշխարհը որ իր Միածին որդին դրկեց...»ը: Կը հաւակնիմ հաւատալ թէ՛ մենք Հայ Քրիստոնեայ ենք ու առ այդ քրիստոնէութեան վրայ, Հայկականութեան դրոշմը դրած ենք: Անշուշտ, բոլորս ալ պակասաւոր ենք մեր քրիստոնէական պարտաւորութիւններուն մէջ՝ պախարակելի ու նոյնիսկ արգահատելի ենք մեր հաւատքին եւ կրօնին պարտաւորութեանց մէջ, թերի ենք մեծաւ մասամբ իսկ ես, «... եւ ինձ բազմամեղիս»:

Տեսաբանութեան եւ ատոր իրագործմանը մէջ անդունդներ կան անշուշտ:

Ողբերգութիւնը բոլորիս է: Ինծի համար Հայ եւ Քրիստոնեայ բառերը անբաժանելի են: Ու երբ ոմանք կը շեշտեն իրենց հայ եւ «Քրիստոնեայ ու հաւատացեալ» ըլլալը, նախ կը մեղանչեն Աստուծոյ առաջ, ապա Հայութեան:

Կրնամ քիչ մըն ալ շեղիլ: 23րդ Սաղմոսը, որ ինծի ծանօթ բոլոր լեզուներով «Տէրը իմ հովիւս է» կը նշէ, գրաբարով կ'ըսէ. «Տէր հովուեսցէ գիս» որ իմ ճապաղ թարգմանութեամբ կը թարգմանուի «Տէրը ինծի հովուութիւն կ'ընէ»: Իսկ երբ ունինք «Ի վայրի դալարուջ անդ բնակեցոյց գիս», կը թարգմանուի «Ձիս խոտաւէտ արօտներու մէջ կը պառկեցնէ» բացատրութիւնը: Եւ տակաւին պնդել թէ աշխարհաբար թարգմանութիւնը գրաբարէն է եւ ոչ թէ Եւրոպական լեզուէ մըն է: Իսկ նաեւ, 160 տարուայ ընթացքին, որեւէ մէկը եղած չէ՞ որ հետաքրքրուի եւ ուղղէ եղածը ու հայերէնի վերածէ այդ: Հիմնականին մէջ հայերէնի հաւատարմութիւնը երկրորդական տեղ գրաւած է եւ նուազ կարեւոր: Այս նաեւ կ'առաջնորդէ ոմանց, որ իրենք իւրապատուկ դաւանանքի ոճը ու այդ ոճի կիրարկումը միակ ընդունելի ձեւն է: Մինչդեռ հակասութիւն չկայ հաւատքի, պաշտամունքի եւ հայերէնի մէջ: Պարսաւանքը ընդհանրական է եւ ամենուս է:

Այս ըսենք ներածականն էր: Ուրիշ հարց:

Առջի օր հրէական տաճարէն - այո, կ'այցելեմ թէ տաճար եւ թէ մզկիթ - ստացայ հրաւէր մը ուր, հրէական նոր տարուան շրջանին, իսլամ, բողոքական, կաթողիկէ եւ պուտտայական «կրօններու» ներկայացուցիչներ պիտի դասախօսէին: Ինծի համար անհասկնալի էր պուտտայականներու մասնակցութիւնը «կրօններու» այս խումբին, նոյնիսկ երբ հաւանաբար, անոնք ամենաբարեխիղճ մօտեցումը ունին առօրեայ իրենց կենցաղին մէջ:

Հաւատքի եւ փրկութեան գաղափարը հիմնական է, կրօններու համար եւ ոչ թէ «բարութիւն ընելը», «ethics»: Քրիստոնեան, ի միջի այլոց, բարութիւն կ'ընէ, չարութիւն չ'ընէ, սայկան այդ Քրիստոնէութենէն անջատ հարց մըն է: Քրիստոնեայ ըլլալու պայման չէ այդ: «The Grace of Doing Nothing» by H. R. Niebuhr. Ուրեմն՝ Պուտտայականներու մասնակցութիւնը, որպէս կրօնական

միակոր իմաստէ գուրկ է այս պարագային:

Կը լիշեմ մօտ 30 թէ 40 տարի առաջ, «Lamp Unto Thy Feet» հեռատեսիլի կրօնական ծրագիր մը կար, ուր Բողոքական պատուելի մը, Կաթողիկէ վարդապետ մը ու Հրեայ ռաբբի մը բարոյական, բարոյագիտականի մօտ, ընկերային նիւթերու մասին, իւրաքանչիւրը իր տեսակէտը կը պարզաբանէր: Հարցը եկած էր ամուսնութեան: Հրեայ ռաբբին քաջուցեալ խօսակցութենէն ըսելով թէ, հրէութեան մէջ, ամուսնութիւնը կրօնական իմաստ չունի, խորհուրդ չէ, թէեւ սովորութիւններու բերմամբ արարողութիւն մըն է, ուր բարեմաղթութիւններ ու աղօթքներ կ'ընեն այդ առթիւ: - Ամուսնութիւնը մեզի համար համաձայնութիւն է, այդքան: Արեւտուր է այդեօք:

Յստակ է թէ, ընկերային բերումով, կառուցները, սովորութիւնները կ'ազդուին շուրջի պայմաններէն ու համարպարփակ ընկերային միջավայրէն: Նաեւ բացայայտ է թէ Հայ եկեղեցոյ կառուցները, կազմը, պաշտօնէութիւնը լուրջ եւ խոհեմ բարենորոգումներու պէտք ունին: Թէեւ հակա՞ն աւամբողջովին տարբեր հարց է: Սակայն բարեխաւքը, եղածը փոխել, տեղը նոր, տարբեր եւ օտար կառուցներ ստեղծելով չըլլար:

Տարբեր նիւթ է նաեւ այն որ, արդեօք հայ եկեղեցին պէտք ունի՞, պէ՞տք է փորձէ, եւ իր դասական մակդիրէն դուրս ելլէ ու այսօրուան, 21րդ դարու «պայմաններու» բաւարարութիւն տալու համար իր էութիւնը կորսնցէ կամ աղաւաղէ: Եւ այդ պարագային, արդեօք հայերէնով, Եւրոպական եկեղեցոյ չի՞ վերածուի, ոչ շատ տարբեր մեր այսօրուան «հայերէն» երգերէն, որոնք կրնան ոմանց կամ շատերուն հաճելի, վարժ, հեշտ, նոյնիսկ սիրելի ու փնտուած ըլլալ, բայց որ արաբերէն, թրքերէն եղանակներ են կամ «տիւքոյի» երգեր են «հայերէնի նման» բառերով մը: Մեղայ Արարատին, ես եւս այդ մեղաւորներէն եմ:

Ընդհանուր մտահոգութիւնս կամ մտածումս, Ամերիկայի մէջ աւելի ընդհանրացած evangelical - որ բառացի բացատրութեամբ, թարգմանութեամբ՝ «աւետարանական» կրնայ նշանակել, եւ ինչ որ Հայ Աւետարանական համայնքին մակդիրի իմաստով չէ որ կը

գործածանմ, այդ դասախօսական պաշտամունքներու առնչութեամբ է, որ կը նշեմ, ըլլան անոնք հակայական թատերասրահներու մէջ թէ շուկայի խանութ մը աղօթատեղիի վերածուած տեղ մը, store fron church - ինծի համար այդ եկեղեցական արարողութիւնը, իմա՝ պատարագ ըլլալէ կը պակսի: Քարողութիւնը, Աստուածաշունչի ուսումնասիրութիւնը (նշելու կարիք կա՞յ թէ միայն հայ թարգմանիչներն են որ «Աստուածաշունչը» բառը կ'օգտագործեն) էական մասն են Քրիստոնէական կրթութեան ու դաստիարակութեան:

Մեր օրերուն բոլոր եկեղեցիները կը փորձեն նոյնանալ: Միասկտար եկեղեցիներու արարողութիւններն ալ, կամայ ակամայ այդ ընհանրացած ոճը որդեգրած են: Միջ եկեղեցական հաւաքոյթի մը, իսլամ իմամը երբ ճաշէն առաջ կ'աղօթէր, քովս նստող Ամերիկացի պատուելիին հարցուցի թէ եթէ չճանչնայինք անձը, արդեօք իր աղօթքէն պիտի դիտարկէ՞ք թէ իմամ է, ռաբբի է, պատուելի է թէ վարդապետ է: Այս բոլորը քաղաքավարութենէն անդին: Քրիստոնէութիւնը սիրոյ վրայ հիմնուած է եւ նոյնիսկ հրեայ-քրիստոնեայ (Judeo-Christian) բացատրութիւնը մի միայն ընկերային, ընկերաբանական, - քաղաքական իմաստ ունի ու փիլիսոփայօրէն անիմաստ բացատրութիւն է: Ողբերգութիւնը մերն է, եւ բոլորինն է:

Մեր ազգականներէն միոյն որդին օտար ամուսնութիւն կը կնքէր, ինչ որ ափսոս սովորական երեւոյթ եղած է: Մնողը ոչ որպէս շարեաց փոքրագոյնը, ոչ թէ միայն դժգոհ չէին, այլ գոհ, քանի «մեր կրօնքէն մէկու մը հետ» կ'ամուսնանայ:

Սակայն, մեր շեշտը, ի դէպ յոգնեցնելու գինով իսկ, կը կրկնեմ, հայկականութեան, հայութեան ու մեր 2000 տարուայ Հայ Քրիստոնէական հաւատքի, եկեղեցոյ խորհուրդը անվթար պահելն է: Բոլոր անոնք, որ Քրիստոս կ'ուզեն դաւանիլ անջատ հայկական իրականութենէն, չըսելու համար, հայկականութիւնը քրիստոնէադաւանութեան բեռ կը նկատեն, - ըսելիք չունիմ անոնց:

Յիսուս տարի առաջ տարբեր աշխատանքներու մէջ եղած ժամանակս, տարեց հայրենակից մը ինձ լիշեցուց «Տղայ, քո հօրը պոստանը թողած՝ օտարի արտը կը հերկե՞ս»:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ
Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year) * \$50,00 for USA
* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.
Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel :----- Fax : -----

ԳՐԱԿԱՆ

ՎԵՐ. ԴՈԿՏ. ՎԱՀԱՆ ԹՈՒԹԻԿԵԱՆԻ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

ԴԱԻԻԹ ԹԵՐՁԻՊԱՇԵԱՆ

160-ԱՄԵԱԿ ՀԱՅՑ. ԱԻԵՏԱՐԱՆԱ-ԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Վերջերս լույս տեսավ Վեր. Դոկտ. Վահան Յ. Թուրքիկեանի երկրագրության գիրքը «160-ամեակ Հայց. Աւետարանական Եկեղեցի» վերտառութեամբ: Գիրքը կը բաղկանայ 280 էջերէ եւ երեք գլխաւոր մասերէ: -

Հատորին «Առաջին Մաս»ը կը պարունակէ հեղինակին 26 յօդուածներն ու դասախօսութիւնները, որոնք ներկայացուած են գանազան վայրերու մէջ, կամ լոյս տեսած հայկական հայատառ կամ անգլիատառ թերթերու մէջ՝ Հայց. Աւետարանական Եկեղեցիի 160-ամեայ յօբելանսին առթիւ:

Գիրքին «Երկրորդ Մաս»ը կը բաղկանայ 14 դասախօսութիւններէ, որոնք ներկայացուած են 14 հայ աւետարանական եկեղեցական եւ աշխարհական ղեկավարներու կողմէ Երեւանի մէջ՝ Սեպտեմբեր 14-17, 2006ին տեղի ունեցած համահայ աւետարանական համաժողովի ընթացքին:

Հատորին «Երրորդ Մաս»ը, որ կը կուզուի «Այլեւայլ» կը պարունակէ հեղինակին կողմէ պատրաստուած տեղեկագիրք մը եւ վերջաբան մը, ինչպէս նաեւ Հայաստան-Սփիւռք Խորհրդատուական Կոմիտէի ներկայացուած Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդի Խօսքը եւ նախագահ Բոյնիստի եւ նախագահ Արքատի Ղուկասեանի շնորհագրերը Հայ Աւետարանական Եկեղեցու 160-ամեակին առթիւ:

Հատորին առաջին 158 էջերուն մէջ, Վեր. Թուրքիկեան կը գրէ Հայ Աւետարանական Եկեղեցիի գանազան յատկանիշներուն, ծառայութիւններուն եւ ապագայ ուղղութիւններուն մասին: Ան կը հարգէ թէ՛ իր 160-ամեայ կեանքին մէջ, ան օրհնութեան աղբիւր մը դարձած է հայ ազգին՝ կրօնական, աստուածաշնչական եւ հայեցի դաստիարակութեան մարզերուն մէջ, ինչպէս նաեւ կը թակարարէ, մարդասիրական, բարեգործական, աւետարանչական եւ մշակութային բնատարաններուն:

գաւառներուն մէջ մատուցած իր ծառայութիւններով:

159էն՝ 257 էջերուն մէջ տասներէջորդ եկեղեցական եւ աշխարհական առաջնորդներ, որոնք կը ներկայացնեն Հայց. Աւետարանական Եկեղեցիի հինգ եկեղեցական Միութիւնները, կ'արտայայտեն իրենց տեսակէտները Հայ Աւետարանական Եկեղեցու պաշտամունքի, դաստիարակութեան, կենցաղավարութեան, աւետարանչութեան, ազգային ինքնութեան, ապագայ առաջնորդութեան, հոգեւոր վիպութեան, համամիութենական յարաբերութիւններու եւ ապագայ հեռանկարներու մասին:

Ըստ Դոկտ. Թուրքիկեանի Հայ Աւետարանական Եկեղեցիին 160-ամեայ յօբելանսական հանդիսութիւններուն նպատակն է.

ա. «ՁԱտուած փառաբանել Հայց. Աւետարանական Եկեղեցիին 160 տարուան կեանքին, վաստակին եւ վիպութեան համար, ու վերագտնել եւ իւրացնել հիմնադիր հայրերուն ու մայրերուն սկզբունքներն ու նուիրումը.

բ. «Նուիրուիլ նոր եռանդով ու թափով Հայց. Աւետարանական Եկեղեցու տեսիլքին եւ առաքելութեան:

գ. «Շեշտել ու զօրացնել Հայ Աւետարանական Եկեղեցիներու մէկութեան ու միասնականութեան ոգին»:

Դատելով հատորին մէջ երեւցող յօդուածները եւ տեղեկագիրքները՝ այնպէս կը թուի թէ՛ 160-ամեակի տօնակատարութեանց առաջադրեալ նպատակները մեծաւմասամբ յաջողած են:

Յատկանշական է նաեւ նշել թէ՛ երջանիկ գուգադիպութեամբ մը Հայց. Աւետարանական Եկեղեցի 160-ամեայ յօբելանսական հանդիսութիւնները եւ Հայաստանի Հանրապետութեան 15-ամեակը տօնուեցաւ գրեթէ նոյն օրերուն, ինչոր յաւելեալ պարգեւ մըն էր համահայաւետարանական պատուիրակներուն համար:

Վեր. Դոկտ. Վահան Յ. Թուրքիկեանի «160-ամեակ Հայց. Աւետարանական Եկեղեցի» սոյն հատորը կը հանդիսանայ իր ցարդ հեղինակած գիրքերուն 28-րդը: Ի բոլոր սրտէ կը շնորհաւորենք մեր վաստակաւոր եւ բազմաբեղուն վերապատուելին՝ իրեն մաղթելով արեւելատու թիւն եւ քաջառողջութիւն, որպէս զի դեռ շատ արժէքաւոր գործեր հրամցնէ ընթացիկ սէր հասարակութեան:

ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Շարունակուած էջ 7-էն

րանի հոգաբարձութեան ատենապետ՝ Տօքթ. Հրայր Աթիբեանը եւ Տնօրէն՝ Պրն. Յովսէփ Ինճէճիբեանը: Անոնք շնորհաւորեցին վարժարանի 25 տարուայ գոյութիւնը, հաստատեցին անոր հաստատաքայլ ընթացքը եւ արձանագրած իրագործումները եւ վերջապէս այս 25ամեայ հաստատութեան մաղթեցին նորանոր յաջողութիւններ եւ յարատեւ վերելք:

Չեռնարկի պաշտօնական բաժնի յաջորդ մասին մջ պատշաճ նուէրով մը գնահատուեցան ընթացաւարտ Ծնողա-Ուսուցչական վարչութեան անդամները Մերտինեան վարժարանին հանդէպ իրենց ցուցաբերած անսակարկ նուիրումին եւ

ծառայութեան համար:

Ապա հաստատութեան 25րդ տարեդարձը խորհրդանշող կարկանդակը կտրեցին ճաշկերոյթին ներկայ եղող հին եւ նոր հոգաբարձութեան ատենապետները, տնօրէններն ու Ծնողա-Ուսուցչական կազմի ատենապետահիւները:

Երեկոյի մնացեալ ժամերը անցան բացառիկ ուրախ եւ խանդավառ մթնոլորտի մը մէջ: Վարձքը կատար Ծնողա-Ուսուցչական Մարմնի անխոջ վարչականներուն:

Մերտինեանի 25ամեակին նուիրուած յաջորդ ձեռնարկը տեղի պիտի ունենայ Փետրուար 4, 2007ին, Արարատ Տան Տէօքմէճեան շքեղ սրահին մէջ, կազմակերպութեամբ վարժարանի հոգաբարձութեան:

ՄՐՏԻ ԽՕՍԲ «ՇԱՐԱԿԱՆ»Ի ՇՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՌԹԻ

ԵՐԱԺՇՏԱԳԷՏ ԳՐԻԳՈՐ ՓԻՏԷՃԵԱՆ

Հայաստանեայց Եկեղեցու Շարակնոցին գրաբարէն աշխարհաբարի թարգմանութեան տիտանական աշխատանքին հրատարակութեան ու այժմ երկրորդ հրատարակութեան առթիւ, ոչ միայն շնորհաւորելի է Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապազեան, այլեւ հայ ժողովուրդի բոլոր գաւառներուն խորին շնորհակալութեան ու երախտիքին արժանի՝ քանի որ թարգմանական այս կոթողական աշխատանքին մէջ ամփոփուած են, ճիշդ դարէն մինչեւ 15րդ դար, հազարամեակի մը վրայ տարածուող մեր հոգեւոր հայրերու ու աշխարհական այր եւ կին ստեղծագործողներու, աստուածային ներշնչում ապրած հոգիներու ճառագայթումները եղող մեր աղօթքերգերը՝ շարականները, որոնք շատ շատերու համար անհասկնալի մնացած էին:

Շարակնոցը, իր բազմերես ու բազմանիւթ բովանդակութեամբ եւ հարուստ գրական ու երաժշտական ստեղծագործութիւններով ոչ միայն ամենագործածական ծիսականարարողական մատենաներէն մին է, ոչ միայն հայ գրականութեան ու երաժշտութեան ոսկի գանձարանն է, այլեւ մանաւանդ քրիստոնէական պատմութեան, Ս. Գրային դէմքերու եւ դէպքերու, Հայց. եկեղեցու սուրբերու, աստուածաբանութեան, դաւանաբանութեան, ազգային պատմութեան եւ հայ ժողովուրդի հաւատքին՝ գեղաճաճանչ լուսադրելու:

Որպէս Սրբազան հօր եկեղեցական երաժշտութեան դասընթացքի վաղեմի ուսուցիչը, գիտեմ՝ շարականերգութիւնը իրեն համար չոր ու ցամաք գիտական առարկայ մը չէր եղած: Ան իր կեանքի ապրումի երեսներէն մին է եղած: Այս կէտին մէջ կը տեսնեմ թարգմանական այս աշխատանքին յաջողութեան գաղտնիքը. որովհետեւ միայն հայագէտ կամ գրաբարագէտ ըլլալ չի բաւեր այսպիսի աշխատանք մը ճշգրտութեամբ կարենալ թարգմանելու համար: Ասիկա մասնաշատուկ բովանդակութեամբ գործ մըն է. գայն թարգմանողը պէտքէ գրաբարագիտութեան հետ ունենայ նաեւ բնագրային նիւթերուն ծանօթութիւնը,



որպէսզի գործի ներքին, յատուկ եւ նրբին ծալքերուն թափանցելով կարողանայ գրաբարէն ուղղող փոխանցումը կատարել աշխարհաբարի: Եւ, Սրբազան հայրը, հազարամեակի մը վրայ տարածուող ժամանակաշրջաններու լեզուական դարձուածաբանութիւնները, բառածերքը, առումները, կրօնագիտական-աստուածաբանական յատուկ տարագաբանումները եւ պատմութեան ազգայնաշունչ ոգին կարողացած է թարգմանել հարազատութեամբ, գրաբարեան նոյն ջերմութիւնը պահելով:

Խնամքով եւ հմտութեամբ կատարուած այս աշխատանքով, հասկնալի, յատուկ եւ մաքուր լեզուի մատակարարութեամբ, գրաբար ու աշխարհաբարը դէմ առ դէմ գետնի վրայ, յաճախ դժուար հասկնալի կամ անըմբռնելի Շարակնոցը, Սրբազանը դարձուցած է հասկնալի եւ դիւրամբռնելի մատենանի մը:

Այս հակայածաւալ գործով, թարգմանիչ Սրբազանը, հայ անհատին կ'ընծայէ առիթը իմանալի ճանաչումով առաւել եւս խորանալու իր հաւատքին մէջ, իսկ գիտաշխատողներուն ու այլ լեզուներու թարգմանողներուն կու տայ աշխատանքին ոսկի բանալին:

Այս գործին իրականացումովը, Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապազեան, մեծ ու յաւերժական արժէք ներկայացնող սրբազան ծառայութիւն մը մատուցած է հայ ազգին: Սրբազան հօր վարձքը կատարել եւ գրիչը դալար:

15-ՐԴ ԴԱՐՈՒ ՁԵՌԱԳԻՐ ՄԱՏԵԱՆ ԱՐ

Շարունակուած էջ 6-էն

լոց» Ով քահանայք եւ վարդապետք աստուածաբանք. եւ ժողովուրդք հաւատացեալք ամենեքեան. զիմ գանգատըս լսեցեք դուք միարբան. եւ գաստուած աղաչեցեք ինձ փրկութեան:

իրաժարական. թէ այլ չունիս մասն յաշխարհէս փոփոխական. եկ ի տուն յախտեմից քո հայրական:

Երեկ գերդ բերդ էի մարմնովս անառական. այսօր հանիմ զիս ի տանէս իմ օթեւան. ի գերեզման զիս կու դնեն որ է զընտան. այլ ճար չունիմ յետ դառնալոյ յիմ օթեւան:

Ձեր Ծանուցումները Վաստահեցեք «Մասիս» Շաբաթաթերթին

ՄԵՐ ԱՆԱՎԻՏԸ...

ՊՕՂՈՍ ԳԻՒԲԵԼԵԱՆ

Երբ հանրաձայնօթ արուեստագետի կամ գրող մը դիմանկարը կը փորձեն կերտել, եւ երբ խնդրոյ առարկայ այդ անձը մօտիկ բարեկամ է, ընդհանրապէս անհարկի մտահոգութիւններու եւ խուճապի կը մատնուիս: Չափիս զգացումի պահպանումը, առարկայական մնալու ճիգը եւ «կայսեր վերադարձնելու» ինչ որ կայսեր կը պարտիս...» երբեմն գրիչդ կ'ամլացնեն:

Սակայն, երբ գործդ անուրանալի տաղանդով օժտուած արուեստագետի մը հետ է, անհատական գեանի վրայ քու բարեկամութիւնդ ու մտերմութիւնդ անոր հետ քեզի աւելորդ բաղկացուցիչներ ու տարածք կը բերէ, կարենալ աւելի խորը պեղելու ենթակային ներաշխարհը, ծանօթանալու անոր հոգեկան տաղանապումներուն, լոյս աշխարհ բերելու ցարդ հանրութենէն քոյարկուած անոր գաղտնի իղձերը, ծրագիրներն ու երազները:

Այս տարուայ Հոկտեմբերին վերջերը, Հայաստան-Ֆրանսա մշակութային օրուայ ծրագրի շրջանակէս ներս, Ֆրանսացի հանրաձայնօթ թատերագիր էրիք-էմմանուէլ Շմիտի «Ամուսնական փոքրիկ գաղտնիքներ» փիէսը բեմադրուեցաւ, Սոււդուկեանի անուան թատրոնի մէջ, խաղարկութեամբ միջազգային ճանաչման արժանացած անուանի դերասանուհի՝ Անահիտ Թոփչեանի եւ նոյնպէս յայտնի դերասան՝ Աշոտ Աղամեանի:

Սոյն փիէսին ֆրանսերէնի հայերէն թարգմանութիւնը կատարած է շնորհալի դերասանուհին, որուն գրական բեղուն գործունէութեան անդրադարձած էինք պատմուածքներու անոր առջինեկ հատորի հտարակութեան առիթով:

Հայաստանեան թերթերէն քաղելով մեր տեղեկութիւնները, Անահիտին թարգմանութեամբ ու խաղարկութեամբ արդիական խոհափիլիսոփայական այդ փիէսին Երեւանեան ներկայացումը, սիրուած դերասանուհիին 16 տարուայ բացակայութենէ մը ետք, հայրենի բեմէն յայտնուումը, բաւական մեծ խանդավառութիւն ստեղծած է արուեստասէր հասարակութեան մօտ եւ փոխարէնը, վստահ ենք, Անահիտ Թոփչեանը անչափ յուզումով եւ ստեղծագործական նոր աւելումով լիցքաւորած:

Յայտնի դերասանուհիին հայրենի բեմ վերադառնալու երեւոյթն է մեզի համար՝ ամենէն յուզականը, ամենէն յուսադրիչը: Փարիզեան իր 15 տարիներու փորձառութեան ընթացքին, արուեստագէտ եւ ստեղծագործ ամուսիններուն վիճակուեցաւ, հայ գիրն ու արուեստը օտարին ծանօթացնելու առաքելութեամբ շարժող դեսպաններ դառնալ, եւ այդ մէկը, շատ յաճախ հայ մշակուցի համար բոլորովին խորթ ու անհիւրընկալ միջավայրի մէջ: Եւ տակաւին, անոնց յաջողեցաւ լաւագոյնս օգտագործել ու արգասաւորել իրենց անխուսափելի, կամաւոր «աքսորը»:

Հայաստան մեր վերջին այցելութեան, գրեթէ երկու տարի առաջ, դարձեալ հանդիպեցանք Ալեքսանտր եւ Անահիտ Թոփչեան արուեստագէտ զոյգին: Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ՝ Լեւոն Անանեանին հետ, չորսով կէսօրուայ ճաշի նստանք:

Փարիզ մշտական բնակութիւն հաստատած ըլլալով հանդերձ, Թոփչեանները իրենց պորտի կապը երբեք չխզեցին հայրենի իրակառութեան հետ եւ տարին քանի մը ամիս, անպայման, հայրենիք այցելելով՝ գրական հրատարակչական բուն գործունէութեան լծուեցան:

Հերթական այդ այցելութիւններէն մէկուն գուգադիպեցաւ մեր այդ հանդիպումը: Սրատես փիլիսոփայ ըլլալու պէտքը չկար նկատելու, թէ հեզ արուեստագիտուհին ի՞նչքան կը տառապէր օտարութեան մէջ եւ ինչպիսի ափսոսանքով կը փնտռէր հայրենի հողին ջերմութիւնը եւ իր բեմական շնորհներուն վրայ հիացող արուեստասէր գանգուածները: Փողոցը, պարզ մարդիկ, երիտասարդ ու հասուն տարիքի, յաճախ կը կանգնեցնէին մեզ, Անահիտին հետ հիացական կամ կարօտի քանի մը խօսք փոխանակելու, երբեմն, կու գային անոր ձեռքը սեղմելու այտերը համբուրելու, կամ ծաղիկ նուիրելու հայ բեմի տաղանդաւոր ներկայացուցիչին: Եւ մեր Անահիտը այդ պահերուն կը վերանար, կ'երտասարդանար ու կը վերագտնէր իր հին օրերու անհոգ ու կենսայորդ ժպիտը...

Օր մը, ի տես այսպիսի տեսարանի մը, քովս կանգնած Ալեքսանտրին ինքնաբուխ մղումով մը հարց տուի. «մինչեւ ե՞րբ այս աղջիկը պատժելով, պիտի քաշքշես ու Փարիզ տանիս, տե՛ս այստեղ ի՞նչպէս լիաթոք կը շնչէ, եւ որքա՞ն երջանիկ է...»

Եւ վերջապէս հասունացման անխուսափելի շրջանը բոլորեցաւ վերադարձի նպատակայարմար պահը որոշելու...

Թէ երեւանեան հայ մամուլին ներկայացուցիչները ի՞նչ կը գրեն արուեստի իրենց բաժնին մէջ:

«Գրական թերթ», «Երկիր», «Հայաստանի Հանրապետութիւն», «Ազգ», «Առաւօտ»... եւ այլն, եւ այլն:

«Տասնվեց տարուայ ընդմիջումից յետոյ»,

«Դժուար ներկայացում եւ վերադարձ»

«Անահիտ Թոփչեան կրկին Հայաստանեան բեմի վրայ»

«Փոքրիկ ոճիրներ մեծ բեմում...»

Եւ ասոնց նման ցնցիչ խորագիրներով անոնք ողջունեցին սիրուած դերասանուհիին երեւանեան ելոյթն ու ժամանակաւոր աքսորէն, թատրոնի ճամբով հայրենի բեմ անոր վերադարձը:

Այս բոլորին մէջ ամենէն յուզիչը, ուշագրան ու քաջալերականը հոն է, որ տաղանդաւոր դերասանուհին, փոխանակ փարիզեան խստաշունչ կլիմային տակ խամբելու, ներքին իր կրակէն ու հրայրքէն պարպուելու, գրական իր շնորհները բացայայտեց, պատմուածքներու բաւական լուրջ հատորով մը հանդէս գալով, ուր հասուն արձակագրի ինքնուրոյն ոճ կը դրսեւորէր:

Անահիտին բիւր երկրպագուներու հետ կը մաղթենք, որ անոր Սոււդուկեանական յաջող ելոյթը իբրեւ մեկնակէտ ու քաթալիստ ծառայէ, նորանոր խիզախումներու եւ մօտաւոր ապագային՝ մշտական վերադարձի մը խոստումնալից:

Հայրենիքը, իր տաղանդաւոր գաւազներուն առջեւ անպայման պիտի բանայ կենսատու, կարօտակէզ իր թեւերը...

ՅԱԿՈԲ ԱՐԲ. ԳԸԼԸՃԵԱՆ

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ 30-ԱՄԵԱԿ, 1976-2006

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԸԱՄԱՈՏ ՏՈՒԵԱԼՆԵՐ

Ծնած է Սուրիոյ հայաբնակ Քէսապ քաղաքը 1955ին, Գլնճեան գերդաստանի բարեպաշտ յարկին տակ, գաւազը Յովհաննէսի եւ Գալատուրանցի Աննա Թիթիզեանի: Տեղույն Ուսումնասիրաց Միացեալ վարժարանը աւարտելէ յետոյ, 4 տարի կը յաճախէ Անթիլիասի Դպրեվանքը, Լիբանան: 1972ին կ'ընդունուի Սբ. Էջմիածնի Գէորգեան ձեմարանը: 1974ին կը ձեռնադրուի սարկաւազ: 1975ին «Պաշտամունք ըստ Հայ Եկեղեցոյ կանոններուն» աւարտաճառի պաշտպանութեամբ՝ գերագանց գնահատականով կ'աւարտէ ձեմարանը: Այնուհետեւ աշխատանքի կը նշանակուի Վեհարանին մէջ: 1976ին Սբ. Էջմիածնի մէջ կը ձեռնադրուի արեղայ:

Նոյն տարին Վազգէն Ա. Հայրապետի կարգադրութեամբ կը մեկնի Գերմանիա աստուածաբանական բարձարգոյն կրթութեան Ռէկէնսպուրկի համալսարանը, միաժամանակ կը ստանձնէ հովուական պաշտօն Գերմանիոյ հայ համայնքին մէջ: 1980ին կ'արժանանայ մասնաւոր վարդապետական աստիճանի, փայլուն կերպով ներկայացնելով իր վարդապետական թէզը «Մեկնութիւն Աստուածայայտութեան» թեմայով:


1984ի Փետրուար 16ին կը ժամանէ Մոնթովիտէօ, Վազգէն Ա. Կաթողիկոսի կարգադրութեամբ որպէս Ուրուկուայի հայոց թեմի Առաջնորդական տեղապահ (Թեմը Վեհափառի կարգադրութեամբ Պուէնոս Այրէսէն բաժնուած էր 1983ին): 1985ին կը ստանայ Մայրաքոյն Վարդապետի աստիճան: 1990ին Թեմական Խորհուրդի միաձայնութեամբ կ'ընտրուի իբրեւ Թեմի անդրանիկ Առաջնորդ:

1990ին ձեռամբ Վազգէն Ա. Հայրապետի Սբ. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ կը ձեռնադրուի եպիսկոպոս: 2001ին կ'արժանանայ արքեպիսկոպոսութեան պատուին:

1989ին կը պարգևատրուի Ռուս Եկեղեցոյ հազարամեակի մետալով, իսկ Հայաստանի կառավարութեան Գերագոյն Խորհուրդն ալ յուշամետալ կը շնորհէ իրեն, հայրենիքի 1988 Դեկտեմբեր 7ի կործանարար երկրաշարժի ժամանակ աղէտահաններուն կատարած օգնութեան համար:

1992ին Հայաստանի Հանրապետութեան նախագահին կողմէ նշանակուած է «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Ուրուկուայի մասնաճիւղի նախագահ:

Իր հոգեւոր առաքելութեան գուգահեռ Յակոբ Սրբազան կը դասաւանդէ գաղութիս վարժա-



Յակոբ Արբ. Գըլըճեան

րաններուն մէջ, ժամանակ մըն ալ կը վարէ Ներսէսեան կրթական Հաստատութեան տնօրէնի պաշտօնը:

Յարգ իր հրատարակած գիրքեն են.

- «Հայաստանեայց Եկեղեցին, Աղբիւր հաւատքի եւ հայրենասիրութեան», 1983ին, 172 էջ, սպաներէն լեզուով, (սպառած):

- «Մարտին Լութեր» Մի բարեպաշտ վանականի ըմբոստութիւնը, 1994ին, 448 էջ:

- «Մեկնութիւն Արարածոց» համաձայն Քահանայական եւ Եհս-վէական պատումներու» 1995ին, 321 էջ:

- «Կոհեղէթ» կամ «Գիրք Ժողովրդի», 2000ին, 240 էջ:

- «Հաւատքի եւ Բանականութեան Հետքերով», 2003ին, 513 էջ:

- «Ծիրանի Ծառ», 2005ին, 307 էջ:

Բացի այս ան գրած է բազմաթիւ արժէքաւոր ու հետաքրքրական յօդուածներ եւ պատմուածքներ, որոնք հրատարակուած են «Էջմիածին», «Հասկ», «Սիւն», «Առագաստ» ամսագիրներուն եւ գանազան հայկական թերթերու մէջ:

Ահա այսպիսի ջանասիրութեամբ, բծախնդիր, քրիստոնէական վայել ու յամառ աշխատանքով, օժտուած գրելու հոյակապ ձիրքով, գերմաներէն, սպաներէն եւ մանաւանդ հայերէն մաքուր, սահուն, ճոխ լեզուով, փայլուն իմացակառութեամբ, Սրբազանը իր արժէքաւոր նպաստը բերած է հայ մշակուցին եւ ընթերցասէր հասարակութեանը:

Սրտանց կը շնորհաւորենք մեր առաջնորդ Յակոբ Սրբազանի կուսակրօն քահանայ ձեռնադրութեան երեսուն բեղուն տարիները: Կը մաղթենք իրեն առողջութիւն, նորանոր յաջողութիւններ եւ երկար տարիների կեանք:

ՌԻՐՈՒԿՈՒԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՍ



Jessica Demirdjian
Realtor®



Prudential

California Realty
9915 Mira Mesa Blvd., Suite 100
San Diego, CA. 92131
Bus: 858.653.6400
Fax: 858.653.6440
Cell: 619.846.7738
Cell: 760.622.6873
jessicad@prusd.com

«ՊԱՏՈԱԾ ԹՈՒՂԹԻ ՄԸ ՎՐԱՅ ԳՐՈՒԱԾ ՈՐՈՇՈՒՄ»Ի ՄԸ ՄԱՍԻՍ

ները, որ արգելի հանդիսանան Պարսկաստան տեղափոխություն պատրաստ առարկաներու, գիտարուեստական գործիքներու եւ դրամագլուխի առաճուցիներուն, որոնք կրնան ծառայել հիւլէական եւ հրքիռային նախաձեռնութիւններու պատրաստութեան:

Հակառակ թեքանի կատարած հաւաստումներուն՝ թէ ուրանիովի գիտարուեստական գործածութիւնը պարզապէս իր մէջ պիտի պարունակէր «խաղաղարար նպատակներ» եւ «ժողովրդանպաստ ծառայութիւններ»: Նաեւ, թեքան ոչ մէկ նպատակ ունէր արժանական ու մի տիրապետող, խախտել ու ծերու հաւասարակշռութիւնը տարածաշրջանէն ներս եւ կամ սպառնալ սահմանակից տէրութիւններուն:

Անշուշտ, դեռեւս 1979ին, ԱՄՆ-ի դեսպանատան մէջ տեղի ունեցած պատանդներու առեւանգման գործողութենէն ասդին թեքանը ու ժաբափելու իր ծրագրին յետամուտ, ու ներկայիս որ կրցած էր ՄԱԿ-ն ալ լծել իր սայլին՝ անշուշտ թէ ԱՄՆ տեղի պիտի չտար թեքանի իշխանութիւններուն ինքնարդարացման փորձերուն առջեւ:

Անկախ այն հանգամանքէն, որ սկսեալ եւրոպական շատ մը երկիրներէն մինչեւ Ծայրագոյն Արեւել, անոնց շարքին Իսրայէլը՝ յայտնեցին իրենց գոհունակութիւնը Ապահովութեան Խորհուրդի ֆուլտարկած բանաձեւի կապակցութեամբ: Միակ դժգոհը հանդիսացաւ ԱՄՆ՝ որ անբարար նկատեց զանիկա:

«Պատերազմի Մարդ»ուն՝ Նախագահ Պուշին համար առիթ էր ամէն գնով հետապնդել Պարսկաստանի իշխանութիւնները: Ամէն ձեռով հսկողութեան տակ պահել զայն: Ամէնուր ննչել միշտ: Առաւելագոյնս նեարդացնել արդէն իսկ դիրազգած իշխանութիւն մը, որ նարահատ, բանիւ եւ գործով պիտի գար հակադրուիլ ՄԱԿ-ի ապահովութեան խորհուրդին ընդհանրապէս նորոշումներուն: Այդ բոլորէն ետ ծանօթ է բոլորիս անոնց յաջորդելու կոչուած Պուշին վարչակարգի նախամեծար գործընթացը. ննչել ՄԱԿ-ի վրայ, որ նախատեսէ աւելի խիստ պատժամիջոցներ, որոնց ձախողութեան պարագային, ինք, թէկուզ առանձին, կարենայ յաջողցնել զինեալ միջամտութիւն մը, ինչպէս որ բրաւ Աֆղանիստանի քալիպաններուն եւ Իրաքի Սատտամի դէմ:

Արդէն իսկ, առաջին օրէն ծայր տուած կը թուի ըլլալ ԱՄՆ-ի ծրագրած հնարամիտ ռազմավարութիւնը: Մահմուտ Ահմատինեհատի, հիմնուելով ՄԱԿ-ի խտրական փառականութեան վրայ (ան համոզուած է որ Իսրայէլ կորիզային զէնքով օտուած երկիր է) կը մերժէ անոր թիւ 1737 որոշումը, զոր գրանցուած նկատեց պատուած թուրքի մը վրայ: Ան սպառնաց ՄԱԿ-ին՝ յայտարարելով թէ իր երկիրը ոչ թէ պիտի դադրեցնէ ուրանիովի հարստացումը, ընդհակառակը՝ 3000 ուժաշարով պիտի աւելցնէ զանիկա:

Ան դիտել տուաւ միաժամանակ, թէ այդ որոշումին ետին կանգնող ուժերը պիտի ստանան իրենց արժանի հակահարուածը:

Եւ վերջապէս, համաձայն Մահմուտ Ահմատինեհատի՝ Արեւմուտքը պէտք է ընդունի ապրիլ միջուկային ուժի տէր Պարսկաստանի մը հետ:

Լուրջ է Պարսկաստանի Խորհրդարանի արձանագրած որոշումը, որ կը պարտաւորեցնէ իր կառավարութիւնը վերատեսութեան ենթարկել իր գործակցութիւնը «Աթմական Ուժանիքի Միջազգային Ընկերակցութեան հետ»:

Այս բոլոր ժխտական երեւոյթներուն դէմ յանդիման՝ լուր է ՄԱԿ-ը:

Լուր են որոշումէն գոհ մնացած պետութիւնները:

Քար լուրքին կը պահեն թիւ 1737 որոշումը անբարար համարող Նախագահ Պուշին ու գործակիցները:

Այլապէս, կը տիրէ մտահոգիչ մթնոլորտ:

Այս բոլորը կուզան ցոյց տալ, թէ Պարսկաստանը կը բոլորէ իր ապրած ժամանակակից տագնապներուն մեծագոյնը: Անոնց առաւել սրումը աղետաբեր կրնայ դառնալ ոչ միայն առանձնապէս իրեն ու ամբողջ տարածաշրջանին, այլ նաեւ աշխարհի խաղաղութեան:

Տարակոյս չունինք, որ Պարսկաստան-ՄԱԿ առժամապէս գրաւոր ու բանաւոր այս մագլցումը պիտի չի մտնէ Նախագահ Պուշին անոր ռազմաշունչ վարչակարգի կորստաբեր զինական միջամտութեան մը խաղին մէջ: Ընդհակառակը՝ ան պիտի ամփոփուի ողջ միտ, այլ շինիչ բանակցութիւններու շրջանակի մը մէջ, ուրկէ պիտի ժայթքեն փոխադարձ վստահութեան, իրար հասկացողութեան ու գործակցութեան առաջնորդող բարի տրամադրութիւններ, ի շահ աշխարհի խաղաղութեան:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA

ՄԱՆՐԱՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԸՆՈԱԶԱՅՆԵԼ
(626) 797-7680 (626) 398-0506



Wahib

Wahib's

MIDDLE EAST RESTAURANT

الشرق مطعم

MEDITERRANEAN LEBANESE FOOD

COME IN AND ENJOY OUR PATIO AND THE FINEST SHISA "HOOKAH"

CATERING FOR ALL OCCASION



MOUHAMAD SALEM & HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR

FAMILY ENTERTAINMENT BANQUET HALL EVERY FRIDAY ~ & ~ SATURDAY NIGHT

INTERNATIONAL ~ ARABIC CALL FOR RESERVATION



BELLY~DANCING

PHOTO / CONCEPT- J / D - 2006 ©TEL(626) 795-4493

910~E.MAIN ST, ALHAMBRA, CA.
TEL 626-281-1006 626-587-1048
FAX 626-281-3641

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՐԹԻՐ ԱՔՐԱՇԱՍԸ՝ ՏԱՐՈՒԱՅ ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻԿ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Հայազգի բռնցքամարտիկ, IBF վարկածով միջին քաշային կարգում աշխարհի ախոյեան Արթուր Աքրա- շասը Գերմանիայում ճանաչուել է տարուայ բռնցքամարտիկ:



Ինչպես տեղեկացնում է fightnews.com ինտերնետային կայքը, BoxSport պարբերականի անցկացրած հարցման արդիւնքներով Աքրաշասը առաջ է անցել գերմանաքաշային կարգում IBF վարկածով աշխարհի ախոյեան Վլադիմիր Կլիչկոյից եւ միջին քաշային կարգում WBO վարկածով աշխարհի ախոյեան Զոլթա Էրդեիրից:

Արթուր Աքրաշասը յայտարարել է, որ շնորհակալ եւ հպարտ է նման տիտղոսի արժանանալու համար:

«Հպարտ եմ, որ ինձ վստահում է թէ ժիւրին եւ թէ մարզասերը: Խոստանում եմ, որ յաջորդ տարի եւս յաջող ելույթներ կ'ունենամ եւ կը պաշտպանեմ նուաճած տիտղոսներս», - ասել է Աքրաշասը:

Հարցմանը մասնակցել են պարբերականի ընթերցողները, ինչպէս նաեւ յատուկ ժիւրին: Վերջինիս կազմում եղել են նախկինում անուանի բռնցքամարտիկներ Դարիուս Միխալչեւսկին, Սվեն Օտկեն, Գրաջիանո Ռոկիջանին:

ՊԱՐԳԵՒՆԵՐ ՖՈՒԹՊՈԼԱՅԻՆ ՄՐՑԱՇՐՋԱՆԻ ԴԱՓՆԵԿԻՐՆԵՐԻՆ

Դեկտեմբեր 24-ին, օփերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի ունեցաւ 2006 թ. ֆութպոլային մրցաշրջանի դափնեկիրների պարգևատրման տարեկերջյան հանդիսաւոր արարողութիւնները:

Բարձրագոյն խմբի առաջնութեան 3-րդ մրցանակակիր Սիլվիայի «մարզչական կազմին, ակումբի ղեկավարութեանն ու ֆութպոլիստներին պրոնզէ մետալներ յանձնեց ՀՖՖ գործկոմի անդամ Լեւոն Հասրաթեանը, իսկ արծաթէ մետալակիր «Բանանցի» պարգևատրման հաճելի արարողութիւնը կատարեց ՀՖՖ գործկոմի մէկ այլ անդամ՝ Ռուբէն Սինոեանը: Այնուհետեւ բեմ հրավիրվեցին «Փիւնիկի» ֆութպոլիստները, որոնք 6-րդ տարին անընդմեջ արժանացան չեմպիոնի ոսկէ մետալներին: Չեմպիոնի փոխանցիկ գաւաթն ու պարգևները փիւնիկցիներին յանձ-

նեց ՀՖՖ նախագահ Ռուբէն Հայրապետեանը: Նա նաեւ դրամական մրցանակներ յանձնեց առաջնութեան լաւագոյն ֆութպոլիստ Արմէն Շահգեղեանին ու լաւագոյն ֆութպոլիստուհի Աննա Կարապետեանին, իսկ առաջնութեան լաւագոյն ումբարկու Արամ Յակոբեանին ֆեդերացիայի նախագահը պարգևատրեց «Ոսկէ խաղակոշիկ» մրցանակով: Մրցանակներ ստացաւ նաեւ մրցավարների լաւագոյն եռեակը՝ Կարէն Նալպանտեանը, Արարատ ձաղարեանը եւ Արման Ամիրխանեանը: Հ

ՖՖ նախագահի պատուգրերով ու հեռուստացոյցներով պարգևատրուեցին ֆութպոլային աշխարհի մի խումբ ներկայացուցիչները: յատուկ մրցանակի արժանացաւ Հանրային հեռուստատեսութեան մարզական հաղորդումների գլխաւոր ռեժիսոր Մելիք Մայիլեանը:

Advertisement for Art Photography featuring a clown image and contact information for Jacob Demirdjian.

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

ԱՆԳԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Անգլիոյ ֆութպոլի առաջնութեան 19-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table of football results for the 19th round of the English Premier League.

Անգլիոյ ֆութպոլի առաջնութեան 20-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table of football results for the 20th round of the English Premier League.

Table showing league standings for the English Premier League.

ԻՏԱԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Իտալիայի ֆութպոլի առաջնութեան 18-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table of football results for the 18th round of the Italian Serie A.

Table showing league standings for the Italian Serie A.

ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Ֆրանսայի ֆութպոլի առաջնութեան 19-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table of football results for the 19th round of the French Ligue 1.

Table showing league standings for the French Ligue 1.

ՍՊԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Սպանիայի ֆութպոլի առաջնութեան 15-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table of football results for the 15th round of the Spanish La Liga.

Table showing league standings for the Spanish La Liga.

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Գերմանիոյ ֆութպոլի առաջնութիւնը ձմեռնային արձակուրդի մէջ է:

Advertisement for MASIS (ՄԱՍԻՍ) with contact information.

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

Հանգուցեալ Տիար ճՈՐՃ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ մահուան տխուր առիթով, Կիլիկեան Կրթական Միութեան Կեդրոնական Վարչութիւնը յանուն բոլոր Կիլիկեանցիներուն կու գայ իր խորագրաց ցաւակցութիւնները յայտնելու այրիին՝ Տիկին Սիպիլ Աբրահամեանին, գաւակներուն եւ համայն հարագատներուն ու բարեկամներուն:

Արդարեւ Պրն. ճորճ Աբրահամեան եղած էր Կիլիկեանի պատուաբեր շրջանաւարտներէն մին եւ միշտ նիւթապէս եւ բարոյապէս զօրավիզ կանգնած էր իր վարժարանին:

Աստուած հոգին լուսաւորէ եւ երկնքի Արքայութեան արժանի ընէ: Այս առիթով Կիլիկեան Կրթական Միութեան եղած են փոխան ծաղկեպսակի հետեւեալ նուիրատուութիւնները, որոնց համար վարչութիւնս կը յայտնէ իր խորին շնորհակալութիւնները:

Պուշաքեան ընտանիք	\$200
Տէր եւ Տիկ. Նուպար Յակոբեան	\$100
Տէր եւ Տիկ. Վարդան Եղաւթեան	\$100
Տէր եւ Տիկ. Բարսեղ Անանեան	\$100
Տիկ. Արշօ Աբարտեան	\$100
Տիար Ռագմիկ Մանուկեան	\$100
Տիար Ժագ Նալճեան	\$100
Տէր եւ Տիկ. Նորայր Մէթիքեան	\$50
Տէր եւ Տիկ. Կարպիս Յովսէփեան	\$50
Տէր եւ Տիկ. Ալան Զաւեան	\$50
Mr. and Mrs. R&Z Frank	\$50
Տիար Ժագ Տէր Աշոտեան	\$50
Տէր եւ Տիկ. Հրանդ Խաչատուրեան	\$30
Տիկին Էլմաստ Պարոնեան	\$30

Յաւերժացնելու համար իր ամուսնոյն Տիար ճորճ Աբրահամեանի չիշատակը, այրին Տիկին Սիպիլ Աբրահամեան (Միսիրեան) 10,000 (տասը հազար) տոլարի նուիրատուութեամբ կրթական հիմնադրամ մը կը հաստատէ Կիլիկեան Կրթական Միութեան մօտ:

Վարչութիւնս բարձր կը գնահատէ Տիկին Սիպիլ Աբրահամեանի նախաձեռնութիւնը եւ մեծապէս շնորհակալութիւն յայտնելով կրկին կը ցաւակցի իր մեծ կորուստին համար:

ԿԻԼԻԿԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ԿԵՂԵՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

ԵՂԻԱ ՍԵՐՈԲԵԱՆԻ մահուան տխուր առիթով «Մասիս»ի խմբագրական կազմը իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի այրիին, ընտանեկան բոլոր պարագաներուն եւ յատկապէս իր եղբօր եւ «Մասիս»ի աշխատակից Հենրիկ Սերոբեանին:

ԱՇԽԱՏԱԻՈՐՆԵՐՈՒ ԿԱՐԻՔ

Փաստտիմայի մէջ հաստատութիւն մը կարիք ունի աշխատաւորուիներու cash register-ի վրայ: Հեռաձայն՝ (626) 833-2331:

ԳՐԱԻՈՒԱԾ ՕՐ

Յունուար 21, 2007
Սահակեան-Լեւոն Մկրտիչեան Գոլէճի նախկին Սաներու Միութեան կողմէ

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»

ՇՆՈՒՄՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՍԱՆԱԿԱՑՈՅՑԸ

CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ
(ԿԼԵՆՏԷՅԼ, ՊԸՐՊԵՆԸ, ԼԱ ԶՐԵՄԵՆԹԱ)
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՍԸ 10:00-11:00

ՔԱԶ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ԾՕ

Ամէն Կիրակի երեկոյեան
Ժամը 11:00-ից 1:00
Կլէմտէյի 26-րդ կայանից

ՇԱՐՈՆԱԿՈՒԱԾԷՂ 13-ԷՑ

Շարունակուած էջ 13-էն

դունելութիւնն ու հիւրասիրութիւնը:

Անաբերտը, Աւստրիայի պետական պաշտօնեայ մը, կը յիշէր Սիբիլիայի հայ աւատատիրոջ Չերմ ընդունելութեան մասին: Հայ ժողովուրդը կ'ընդունէր Քրիստոնեայ խաչակիր ազնուականներուն, բայց անոնք շահագործեցին հայ ժողովուրդի տաք ու ջերմ ընդունելութիւնն ու հիւրասիրութիւնը: Այն ժամանակ էր որ միայն հայերը կ'ընդիմանային անոնց ապերախտութեան վրայ:

Խաչակիր ասպետներու հետ հայ ժողովուրդը ունեցաւ շատ սերտ յարաբերութիւն: Յայտնի էր որ Կիլիկիայի սահմանակից եւ կամ դրացի Եւրոպական շատ պետութիւններու հետ հայ իշխաններ, յատկապէս Ռուբինեաններու արքունիքը, իրենց իշխանութեան սկզբնաւորութենէն իսկ ունեցած են մօտ յարաբերութիւններ եւ խնամիական կապեր:

Խաչակիր ասպետներու հետ հայ ժողովուրդը ունեցաւ շատ սերտ յարաբերութիւն: Յայտնի էր որ Կիլիկիայի սահմանակից եւ կամ դրացի Եւրոպական շատ պետութիւններու հետ հայ իշխաններ, յատկապէս Ռուբինեաններու արքունիքը, իրենց իշխանութեան սկզբնաւորութենէն իսկ ունեցած են մօտ յարաբերութիւններ եւ խնամիական կապեր:

Խաչակիր ասպետներ հաստատուած եւ ոչ միայն Պաղեստինի, Եգիպտոսի մէջ, այլեւ Կիլիկիոյ մէջ եւ իրենց համար կառուցեցին տուներ, ստացան կալուածներ: Շատ ազնուական տուններ, Եւրոպայէն կը տիրէին այս կամ այն բերդին: Մեծ էր հայ իշխաններու եւ ժողովուրդի կապը Եւրոպայի ասպետներու հետ: Անոնք ամենօրեայ հազորակցութեան մէջ էին իրար հետ:

Խաչակիրներու արշաւանքը իր հետքը ձգեց պատմութեան մէջ, ան ձեւաւորուեցաւ որպէս «Սուրբ Քաղաքի» ազատագրման, անձնուէր մարտիկներու բանակ: Հիմնական նպատակն էր տիրանալ Արեւելքի մէջ նոր տարածութիւններ գրաւելու, տիրանալու, ու հզօրանալու: Հռոմի պապի եւ մեծ աւատապետներու եկամուտները փարթամացնելու:

Խաչակիրներու յոյսերն ու սպասուածները մեծ մասամբ չիրականացան: Արդիւնքները նշանակալից դարձան Եւրոպայի համար: Օրինակ, հարստացան շատ հողատէրեր, Միջերկրական Ծովու Արեւելեան մասին մէջ զօրացուցին ու ամրապնդեցին իրենց դիրքերը: Ինչպէս Վենետիկն ու Ճենովան: Արեւելքը իր դաժան ու տխուր չիշողութիւններու հետ միասին, Եւրոպացիներէն դրական արդիւնքներ ունեցաւ: Եղան կարգ մը փոփոխութիւններ կենցաղային ու հասարակական կեանքի մէջ: Ներածուեցան շատ բառեր, փոխ առնուեցան Եւրոպական բառեր որոնք կը նշանակեն նաեւ նոր հասկացողութիւններու մուտքը Արեւելեան կենցաղին մէջ: Կիլիկիան ունենալով մօտ յարաբերութիւն խաչակիր ասպետներու հետ էր կրնար անմասն մնալ այս բոլորէն: Ան ենթարկուեցաւ որոշ ազդեցութիւններու որոնք այնքան ալ մակերեսային չէին:

Կիլիկիայի մէջ ալ մնացին Եւրոպայի ասպետներու մասին չիշողութիւններ, սովորութիւններ: Իսկ Միջին հայերէնը, որ բաղադրիչ մասն է Կիլիկիայի մէջ խօսուած քին, այդ կը թուի նաեւ ըլլալ Հաճընի բարբառը, օտար ազդեցութիւններու համար նպաստաւոր էր:

Միասնական ու կեդրոնական պետականութեան վերացումը, աւելին, յափշտակիչներու, գրաւիչներու, արշաւանքները, հայ ժողովուրդի ազատագրական պատերազմները, թշնամիին գերակշիռ ուժերուն դիմադրելու անոր օրհասական ճիգերը, այդ պատերազմներու պատճառով երկրին աւերածութիւնը, տնտեսական անկումը, որոշ բնակչութեան տեղահանութիւնները բռնի կամ կամովին գաղթելը, բացասական անդրադարձ ունեցաւ շարք մը առումներով: Երկարատեւ օտար լուծը, իր հետ կը բերէր նաեւ լեզուական օտար ազդեցութիւններ, լեզուներու մշտական փոխազդեցութեան կ'ենթարկուէին:

Հաճոյ բարբառը, ինչպէս միջին հայերէնի մէջ գիտցուած տարբերակ մը, առօրեայ խօսակցական լեզուին մէջ փոխազդեցութիւնը կը կատարուի աւելի արագ եւ կը դառնայ աւելի արդիւնաւէտ, քան գրական լեզուին մէջ: Ժողովուրդը իրարու հետ կը հաղորդակցի առօրեայ-խօսակցական լեզուով եւ պարզ է որ նոյն լեզուով ալ կը շփուէին օտարերկրացի հիւրերուն հետ եւ անոնց հետ նաեւ, որոնք արդէն բնակութիւն հաստատած են իրենց մէջ: Լեզուն ազդեցութեան կ'ենթարկուի քանի որ մշտական շփումը էր կրնար անհետեւանք մնալ: Տարբեր լեզուներով խօսող ժողովուրդներ իրարու հետ կը շփուէին առեւտուր ընելով կենցաղային բազմազան կարիքները հոգալով:

Սկիզբը լեզուի յարաբերութեան մէջ կ'օգտագործէին օտար բառեր, ետքը կամ հայերէն համարժէք բառն էր որ կը գործածէին կամ ալ օտար բառը այնքան կ'օգտագործէին որ ժամանակի ընթացքին նոյնիսկ կը մոռնային այդ բառին օտարամուտ ըլլալը: Օրինակ, այսօր որեւէ մէկուն մտքէն չ'անցնիր որ մկրատ, կանաչ, դաշտ, բառերը փոխառութիւն են պարսկերէն լեզուէն: Տարիներու ընթացքին շատ փոխառութիւններ կ'ըլլան, փոխարինելու իսկական հայերէն բառերը, այսուամենայնիւ, օտար բառերը մեր լեզուին մէջ, բաւական չափով մոտաք գործած են: Օտար բառեր, որոնց մեծ մասին, հայերէն համարժէքը ունինք, բայց կը շարունակենք գործածուել օտար բառը: Այս երեւոյթը կարելի է բացատրել անով, որ ժողովուրդին մէջ ուղղակի սովորութիւն դարձած է եւ անոր համար կօգտագործէ այդ օտար բառերը: Մեր բարբառներուն մէջ շատ կան օտար լեզուներէ առնուած բառեր: Աւելի շատ են խօսակցական լեզուի մէջ, քան գրական լեզուով:

Գրական լեզուին մէջ աւելի շատ են «տէրմիները», իսկ առօրեայ խօսակցական լեզուի մէջ շատ են բառապաշարի կենցաղային շերտի բառերը:

(Վերջ)

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION



Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:
Proud Past, Exciting Future.



NEW YEAR'S EVE DINNER-DANCE

ORGANIZED BY AGBU - AYA GLENDALE-PASADENA CHAPTER

ENTERTAINMENT & SURPRISES

SUNDAY, DECEMBER 31, 2006 – 8:00PM

AGBU ALEX MANOOGIAN CENTER
2495 E. MOUNTAIN STREET, PASADENA, CA 91104

Music by DJ Heartbeat • Catering by La Fogata

Special Program and Menu for Children in a Separate Hall

Adults \$75 / Children 12 and under \$35 / Children 6 and under Free

RSVP - LIMITED SEATING

Call the AGBU Alex Manoogian Center (626) 794-7942

AGBU 2007 SUMMER INTERN PROGRAMS

IN

NEW YORK,

PARIS

AND NOW YEREVAN

SUMMER INTERNSHIP APPLICATIONS BEING ACCEPTED NOW.
FOR MORE INFORMATION, EMAIL NYSIP@AGBU.ORG

AGBU CENTENNIAL SPONSORS

6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • commercescasino.com

CROWNE PLAZA
HOTELS & RESORTS

Bank of Orange County is a full service bank prepared to meet the needs of both small and large businesses.

BANK of ORANGE COUNTY
Commercial Real Estate
Term Loans and Lines
Free Business Checking
High Rate Money Market

Contact:
Gus Ghusayni
Senior Vice President
411 N. Central Avenue
Glendale, CA 91203
bankoforangecounty.com
(818) 548-2720